





### ՄՊԱՆԴ՝ ԳԵՐՄԱՆԻՈՅ ԴՊՐՈՑՆԵՐԻՆ ՍԵԿՈՒՆ ՍԵՋ

ԷՐՅՈՐԹ. 26 (ՌՈՅԹԸՐԸ).- Գերմանիոյ դպրոցներէն մէկուն մէջ 18 հոգի սպանուեցաւ Ուրբաթ օր, երբ նախկին աշակերտ մը կրակ բացաւ աշակերտներուն եւ ուսուցիչներուն վրայ ու ապա՝ ինքնիշխան սպաննեց, յայտնեց ոստիկանութիւնը:

Էրֆորթ քաղաքի ոստիկանապետ Մանֆրէտ կրուպֆը, որ դպրոցէն վտարուած 19 տարեկան նախկին աշակերտ մըն է գործողութիւնը կատարողը: Կրուպֆ մեծեց այլ մանրամասնութիւններ փոխանցել:

Ոստիկանութիւնը անմիջապէս պաշարած էր դպրոցը, երբ զինեալի մը ներկայութեան մասին լուրեր յայտարարուեցան: Սկզբնական տեղեկութիւնները կը խօսէին երկու զինեալներու մասին: Իսկ ականատես աշակերտ մը ըսաւ, որ ուսուցչութեան քննութեան սրահի մը մէջ նստած աշակերտ մը յայտարարած է, թէ քննութիւնը պիտի չանցնէ ու ապա ատրճարակ մը հանելով սկսած է կրակել: Այլ աղբիւրներ հաղորդեցին, որ զինեալներ մտած էւ աջ ու ձախ կրակած են: Դէպքին ճշգրիտ մանրամասնութիւնները տակաւին չհրապարակուեցան:

Ոստիկանութիւնը յայտնեց, որ 18 կոնտրոլ կարգին են երեք աշակերտներ, 13 ուսուցիչներ, ոստիկան մը եւ զինեալը: Վիրաւորուած են նաեւ տասնեակ մը ուրիշներ: Դպրոցին մէջ կային մտաւորապէս եօթը հարիւր աշակերտներ՝ 10-19 տարեկան:

### «ԶԱՅԻՏԱ»Ի ԵՒ ԹԱԼԵՊԱՆՆԵՐՈՒ ՅԱՐԶԱԿՈՂԱԿԱՆ ՄԸ՛՝ ՄՕՏԱԼՈՒՏ

Կ'ԸՍԵ ՌԱՄՏԵԼՏ

ՊԻՇԲԷՔ, 26 (ՌՈՅԹԸՐԸ).- Մ. Նահանգներու պաշտպանութեան նախարար Տոնրոյ Ռամսֆելտը, Աֆղանիստան եւ Կեդրոնական Ասիոյ այլ երկիրներ շրջապատող իր մեծ նշանակեցողութիւնը նախատեսած է, որ Աֆղանիստանի մէջ թալեպան եւ «Քալիտա» զինեալներու կողմէ գերմանացի յարձակողական մը մտաւորութիւնը:

Ռամսֆելտը Ուրբաթ օր հասած է Երրիւրկիստան, այցելելու համար ամերիկեան եւ արեւմտեան այլ 1900 կիւտոններու, ինչպէս նաեւ՝ մայրաքաղաք Պիշքէքի «Մանաս» միջազգային օդակայանին մէջ՝ ամերիկեան եւ ֆրանսական ռազմական օդանավերու խարխախտներ:

Ուաշինկթընի Երրիւրկիստան ճամբուն վրայ, նախարարը յայտնած է, թէ կը նախատեսէ, որ Աֆղանիստանի մէջ «Քալիտա» եւ թալեպան զինեալներ մօտ մտնեն պիտի վերախմբուին եւ յարձակողական պիտի սկսին Համիտ Քարպայի փոխանցման կառավարութեան եւ հոն գտնուող արեւմտեան ուժերուն դէմ:

Մանասի օդակայանին մէջ կան շուրջ 2000 կիւտոններ, որոնք թիւը 3500ի պիտի բարձրանայ մօտ առեւնէն, նկատի ունենալով, որ Լեհաստանէն, Թուրքիայէն եւ Քանադայէն ուժեր պիտի միանան 8 երկիրներէ արդէն իսկ հոն գտնուող ուժերուն:

Ռամսֆելտը յայտնած է, որ Աֆղանիստանի մէջ իր տեսակցութիւններուն ընթացքին պիտի քննարկուին յատկապէս ապահովութեան վերաբերեալ հարցեր:

### ՊԼԷՐ ԿԸ ՊԱՇՏՊԱՆԷԼԷ ԼՈՆՏՈՆԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

ԼՈՆՏՈՆ, 26 (ՌՈՅԹԸՐԸ).- Բրիտանիոյ վարչապետ Թոնի Պլէր պաշտպանեց իր երկրին որդեգրած դիրքը Միացեալ Նահանգներու կողմէ պահպանուող ղեկ գալը թալեպանի նկատմամբ, ինչպէս նաեւ իր համաձայնութիւնը տուաւ Իրաքի դէմ Միացեալ Նահանգներու կողմէ յարձակումի հրահրական ծրագրերուն:

Մ. Նահանգներու հանդէպ իր ցուցաբերած վարչապետութեան մասին քննադատութիւններուն պատասխանելով՝ Պլէր «Տը Կարտիքը» օրաթերթին յայտնեց, որ Մ. Նահանգներու մէջ գոյութիւն ունին ուժեր, որոնք կը հաւատան, թէ առանձին պէտք է աշխատին:

«Մեր պարտականութիւնն է ոչ ըսել նման ուժերուն եւ փաստել, որ կան դաշնակիցներ, որոնք հետ կրնան գործակցիլ: Աշխարհի տարածքին շատեր տակաւին կը նախանձին Ռաշինկթընի հետ մեր՝ Բրիտանիոյ ունեցած յարաբերութեան», ըսաւ Պլէր:

Ան նշեց, որ Բրիտանիոյ կողմէ Իրաքի եւ նախագահ Սատանու Հուսէյնի դէմ կատարուելիք որդեգրած արդիւնքը պիտի չըլլայ: Մ. Նահանգներու հանդէպ մեր հաւատարմութեան, այլ՝ 11 Սեպտեմբերի յարձակումներէն ետք բխած իբրեւ շտապ օգնութեան վերապահութեան օգտագում:

Պլէր ընդգծեց, որ Սատանու վտանգաւոր անձնատիրութիւն մըն է անկախած, շեշտելով սակայն, որ անոր դէմ քայլերու անմիջապէս չի ձեռնարկուի Միջին Արեւելիքի տագնապին պատճառով:

ՎԱՆԱՅ ԶԱՅՆ ՎԱՆԱՅ ԶԱՅՆ  
Այսօր կտօրուան ժամը 1:00ին կրնաք լսել մեր հարցազրոյցը «Մերոպ Մաշտոց» աշակերտական երգչախումբի ղեկավար  
ԳԱՅԻԱՆԷ ՍԻՄՈՆԵԱՆ - ՏԵՐԵԱՆԻ ԿԵՆՔ  
●3այտագիրին կրկնութիւնը՝ կտօրէ ետք ժամը 4:00ին:

ԼՕԻԻ  
ՀԱՅԱՇԵՆ ՄԱՍՆԱՃԻՂ  
ՊՏՈՅՏ ՄԱՅԻՄ 1Ի ԱՌԻԹՈՎ (ԴԵՊԻ ՖԱՐԱՅԱ)  
●Այցելութիւն՝ Զմմառու վանք եւ թանգարանը.  
●Կտօրուան ճաշ «Տըսր Ամար» ճաշարանին մէջ:  
●Նարտի եւ պլոթի մրցաշարը:  
Մասնակցութեամբ՝ ԵՐԱԿ ԿԱՅՈՒՄԵԱՆԻ ԸՆԿԵՐԱԿԿՈՒՄԵԱՆՔ՝ ՄԵՂՕ ՊԱՆՏԱՍԱՐԵԱՆԻ  
●Մեկնում՝ Գործընթացի, 1 Մայիս 2002, առաւօտեան ժամը 8:00ին, Հայաշէնի դաշտէն յատուկ օրոպիւններով:  
Սակ՝ 20 տողար Փոքրերու 10 տողար  
ԾԱՆՕԹ.- Տեղերը նախօրոք ապահովելու համար հեռաձայնել 03 - 364282 թիւին:

### ՖՐԱՆՍԱՅԻ ՆԱԽԱԳԱՅԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

## ՇԻՐԱՔ Կ'ԱՇԽԱՏԻ ՄԻԱՅԵԱԼ ՃԱԿԱՏ ՄԸ ԿԱԶՄԵԼ ԼԸ ՓԵՆԻ ԴԵՍ

Ֆրանսայի նախագահ Ժաք Շիրաքը հակադարձելով ծայրայեղ աջակողմեան «երկրաշարժ»ին, որ ցնցած է ֆրանսական քաղաքականութիւնը, ձեռնարկած է երկրին բոլոր պահպանողականները մէկ մեծ կուսակցութեան մը մէջ համախմբելու աշխատանքին, որպէսզի յառաջիկայ 5 տարիներուն իրեն զօրավիգ կանգնին:

Շիրաք, որ այժմ արշաւ կը տանի իբրեւ ժողովրդավար Ֆրանսայի պաշտպան՝ ընդդէմ ծայրայեղ աջակողմեան թեկնածու Ժան - Մարի Լը Փէնի, այս շաբաթ խմբած է իտրիդարանին մէջ կոյիստ, կեդրոնի եւ պատական երեսփոխաններուն մեծ մասը՝ նոր կուսակցութեան մէջ:

Շիրաքի ականաւոր երկու դաշնակիցներ՝ Ֆրանսուա Պարոյ եւ Ալէն Մատրլէն, կ'ընդդիմանան «նախագահի կուսակցութեան», որ անիկա իրենց կեդրոնի կամ ապառ շուկայի վերաբերեալ տեսակետները խեղճամի պիտի ընէ նոր անուն մը կրող կոյիստ շարժումի մը մէջ՝ գլխաւորութեամբ նախկին վարչապետ Ալէն ժուլիէի:

Սակայն նկատի ունենալով, որ Ալգային Ժողովին մէջ իրենց երեսփոխաններէն շատեր կ'իրենք լքած են՝ Շիրաքի միանալու համար, անոնց վրայ ճնշումներ կը բարձրանային, տեղի տալու եւ միանալու առաջարկուած «Նախագահական Մեծամասնութեան Մը Համար Միութեան»:

Ֆրանսական Ժողովրդավարութեան Համար Միութեան (Իւ.Տ.Է.Ֆ.) խորհրդարանական ղեկավար Ֆիլիփ Տուր - Պայի «Լը Ֆիլիպ» օրաթերթին յայտնած է, թէ պէտք է կատարել ծայրայեղ աջ Մայիս Տի եւ Յունիս 16ի ընտրութեանց եւ Ժաք Շիրաքի ապահովել մեծամասնութիւն մը, որ պատմական այս պատասխանատուութեան կը համապատասխանէ:

Ֆրանսա Մայիս Տի պիտի կայացնէ Շիրաքի եւ Լը Փէնի միջեւ նախագահական ընտրութեանց երկրորդ հանգրուանը:

Երեսփոխանական ընտրութիւնները, որոնք Յունիս 9ին եւ 16ին պիտի կայացուին, մրցակցութեան գլխաւոր առանցքը կը համարուին, նկատի ունենալով որ Շիրաքը աջակողմեան մեծամասնութիւն մը կ'ուզէ, որպէսզի կարենայ օգտակար ձեռով ղեկավարել, փոխանակ յաւելեալ 5 տարուան համար իշ-

խանութիւնը բաժնեկցելու ձախիս հետ:

#### ԼԸ ՓԵՆ ԵՐՈՊԱՅԻ ԳԾՈՎ ՇԱՐՔ ՄԸ ՊԱՇՏԱՆՆԵՐ ԿԸ ԴՆԵ

Մինչ այդ, Լը Փէն, գանգաւորով, որ խուլիկաններ արգիլած են իրեն այս շաբաթ Պրիւսիայի մէջ իր քաղաքականութիւնը բացատրել, երէկ Փարիզի մէջ ելույթ կատարեց:

Մայրաքաղաք Փարիզի մէջ արդէն իսկ գոյութիւն ունին «արգելափակման կեդրոններ», որ անհրաժեշտ վաւերացումներէ կտրկ օտարապետներ կը պահուին, մինչեւ անոնց պարագաներուն քննարկումը:

Սակայն Լը Փէնի «կայսր» քառիս գործածութիւնը կը լիջեցնէր նախագահութիւնը, ըստ ցեղասպանութեան դէմ արշաւ տանողներու: Մինչ Լը Փէն կը խօսէր, 80 կապակերպուծութիւններ կը յայտարարէին, թէ ցուցքը պիտի կատարէ Շաբաթ օր (այսօր):

Լը Փէն Շիրաքը անբաստանած է ցուցքը կապակերպելու յանցանքով:  
Շար.ը՝ էջ 10

## ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

Ա.Լ.ՃԵՐԻԱ.- Իսլամական զինեակներ արեւմտեան Ալճերիոյ մէջ սպաննեցին չորս քաղաքացիներ եւ վիրաւորեցին երեք ուրիշներ, հաղորդեց պետական «էյ. Փի. էս» լրատու գործակալութիւնը, Ուրբաթ օր:

ՆՈՂԱՆԵՍՊՈԼԻԿ.- Հարաւային Աֆրիկէի Քուազու-լու Նաթալ նահանգին մէջ պատ մը գահավիժեցաւ ձոր մը: Սպաննուեցաւ 22 հոգի եւ վիրաւորուեցան 45 ուրիշներ, յայտնեցին պաշտօնատարներ:

ՄԻԻՆԱԿԱՐ.- Ղեկավարուած Բաքիստանի միջեւ գտնուող Քաշմիրի շրջանին մէջ հնդկական ապստամբական ուժեր սպաննեցին ինը իսլամ անջատողականներ, սովորական բախումի մը ընթացքին, յայտնեց բանակի մը բանբերը:

ՎԻԵՆՆԱ.- Իտալացի չմշկողներ Աւստրիոյ լեռնային շրջաններուն մէջ չմշկելու ընթացքին թաղուեցան, իսկ մնացեալ հինգը կրցաւ կարճ ժամանակ մը ետք փախուստ տալ:

ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍ.- Ռուսական ծագում ունեցող Իգոր Տեյր, որ 1940ական թուականներուն առաջին անգամ ձուլիվուտ բերած է եռկան, մահացաւ Արժանքի մէջ 102 տարեկան բոլորելէ ետք: Ան 66նջցուած է իբրեւ «եռկա ընդ առաջին կիցը»:

ԽԱՐԹՈՒՄ.- Արեւմտեան Սուտանի Տարֆուր նահանգին մէջ անձեռօթներ հրկիցած են երեք գիւղացի, յայտնած է «Ալ Ռայ ալ Աամ» օրաթերթը:

ՊԿՈՒՄ.- Պոկոթայի մէջ Քոլումպիոյ ոստիկանութիւնը գրաւեց 3,5 թոն պայթուցիկ նիւթեր, որոնք մարքսիստներու կողմէ պիտի օգտագործուէին մայրաքաղաքին վրայ ծրագրուած յարձակումներու ընթացքին: Ոստիկանութիւնը ձեռքարկելէ ցաւե Քոլումպիոյ Յեղափոխական Զինեալ Ուժերուն անդամ 17 կասկածելիներ:

### ԿԱՄՊԻՑ ԾՈՎՈՒ ԶԱՐԻՐՈՒՆ ԿԵՐԱԲԵՐԵԱԼ

## ՄՈՍԿՈՒՎ ԿՐՆԱՅ ԵՐԿԿՈՂՄԱՆԻ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ ԲԱԺՆԵԿՅՈՒԹԻՒՆԸ ՀԵՏԱՊԵՂԵԼ

Կ'ԸՍԵ ՓՈՒԹԻՆ

Ռուսիոյ նախագահ Վլադիմիր Փութին Հինգ-շաբթի օր յայտնած է, թէ Մոսկուա կրնայ Կասպից ծովու քարիղիք եւ այլ հարստութիւններու բաժնեկցութիւնը հետապնդել շարք մը երկրորդային համաձայնութիւններով, եթէ ծովը եպերող երկիրներուն մէջ ընդհանուր համաձայնութիւն մը չգոյանայ:

Փութին կը խօսէր Աւստրաիայի մէջ, ուր ան բանակային ղեկավարներու յայտնած է, թէ Կասպիցի մէջ ռուսական ծովու ինչ ներկայութեան թափ պէտք է տան:

Օր մը առաջ, Կասպից ծովը եպերող 5 երկիրներու ղեկավարներուն միջեւ կայացած վեհաժողով մը առանց համաձայնութեան մը գոյացման ւարտած էր:

Իրան, Ալբաիան, Թուրքմենիստան, Ղազախստան եւ Ռուսիա տարակարծիք են ծովուն մակերեսը, ինքնին շուրթերը եւ հետեւաբար ձկնորսութեան իրաւունքները, ինչպէս նաեւ քարիղի պահեստները բաժնեկցելու ձեռնարկը:

Փութին յայտնած է, որ Կասպից ծովը շատ հարստութիւններ ունի, սակայն ռուսական քարիղի ընկերութիւնները ճնշումներու տակ կը իրոնին ծովը եպերող պետութիւններուն միջեւ տարակարծութեանց պատճառով:

Նախապէս Փութին Աւստրաիայի մէջ տեսակցութիւններ ունեցած է բարձրաստիճան պիտուրականներու հետ եւ ծովու իրաւամաստար ծովակալ Վլադիմիր Քուրոյետովի իրահանգած, որ ռազմափորձերու ձեռնարկի այս անառ ռուսական կասպեան նաւատորմի օգտագործումով:

Ան ըսած է, որ ծովը եպերող միւս երկիրներուն ներկայացուցիչները պէտք է հրաւիրուին, աւելցնելով, որ սիւրբեկութեան եւ թմրեցուցիչի մաքսանենգութեան դէմ պայքարը ռազմափորձերուն գլխաւոր պատակը պէտք է ըլլայ: (ՌՈՅԹԸՐԸ)

### ՎՐԱՍՏԱՆ - ԱԲԽԱՉԻԱ ՏԱԳՆԱՊԸ՛ ԱՆԵԼԻ ԱՌՉԵՒ

Կ'ԸՍԵ ԱՆԱՆ

ՄԱԿԻ ընդհանուր քարտուղար Քոֆի Անան Հինգշաբթի օր յայտնած է, թէ Վրաստան եւ անոր անջատողական շրջանը անլ վիճակի մէջ կը մնան՝ շրջանին սպառնալ կարգավիճակին գծով:

ՄԱԿԻ Ապահովութեան խորհուրդին ներկայացուցած իր նորագոյն տեղեկագիրին մէջ, Անան յայտնած է, որ Աբխազիա կը մերժէ բանակցութիւններու սկսիլ, շեշտելով, որ իր կարգավիճակը արդէն իսկ ճշդուած է իր միակողմանի կերպով անկախութեան հռչակումով:

Բանակցութեանց բացակայութեան, երկու կողմերուն միջեւ յարուածութեան համեմատութիւնը շատ բարձր կը մնայ եւ իւրաքանչիւր կողմ միւսը կ'ամբաստանէ «սահաբեկիչներու» ապաստան տալու եւ «սահաբեկական գործունէութիւն» քաջալերելու յանցանքով, ըսած է ան:

«Տագնապը շատ երկարած է եւ պէտք չէ արտօնուի, որ անիկա այս ձեռով մնայ», ընդգծած է Անան:

Ընդհանուր քարտուղարը թելադրած է, որ համակարգող խորհուրդը, որ ստեղծուած է երկու կողմերուն միջեւ կապը պահելու համար, պէտք է մօտ օրէն ծողով գումարէ, որպէսզի գոնէ ապահովութեան եւ տնտեսութեան կապուած հարցեր քննարկէ:

(ՌՈՅԹԸՐԸ)

### ՌՈՒՍԱԿԱՆ ՀՐԹԻՌ ՄԸ ՍԽԱԼՄԱՍԲ ԿԻՅՆԱՅ ԶԱԶԱՍՄԱՆԻ ՄԷՋ

ՄՈՍԿՈՒՎ, 26 (ՌՈՅԹԸՐԸ).- Ռուսական հրթիռ մը ռազմափորձերու ընթացքին սխալմամբ Ղազախստանը հարուածած է, խոստովանած է Ուրբաթ օր պաշտպանութեան նախարար Սերգէյ Իվանով, նման նորագոյն ղեպքին ընթացքին:

Պատկերասփռուած հարցապրոյցի մը ընթացքին, Իվանով ըսած է, թէ հրթիռը, որ ըստ ռուսական լրատու գործակալութիւններու «Էքս-22» տիպի օդէն ցամաք արձակուող հրթիռ մըն է, Չորեքշաբթի օր սխալ ձեռով արձակուած է Աւստրաիայի մէջ եւ ղազախական հողաստի վրայ ինկած: Մարդկային կամ նիւթական վնասներ չեն արձանագրուած:

Նման դէպքեր՝ երկու անգամ 1999ին, անգամ մը Օգոստոս 2001ին, Ռուսիոյ եւ Ղազախստանի միջեւ ընդհանրապէս հեպաստի յարաբերութիւնները լարած են:

ՏԱՐԵՂԱՐՉԻ ԼԱՒԱԳՈՅ ՆՈՒԷՐԸ  
VIDEOԻ ԿԱՍ ՇՈՒ ԿՐԱՅ  
VIDEO CLIPՆԵՐ  
ԱՆՉԻՆ ԱՆՈՒՆՈՎ ԵՒ ՄԱԿԱՆՈՒՆՈՎ  
Դիմել՝ ԱՐԱ ԵՔԵՔԵԱՆ ՀԱՍՏ.  
Հեռ. 01 / 261696, 03 / 250518

ԱՅՍՕՐ՝ ՇԱՐԱԹ, 27 ԱՊՐԻԼԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ  
ՀԱՄԱԶԱՅԻՆ «ԿԱՐԿԱԿ» ԵՐԳՉԱՆՈՒՄԻՆ ԵՐԱԲԵՐՈՎ  
Ելոյթ կ'ունենայ  
ԲԵՐԻՈՅ ԹԵՍԻ ՌԻՍՈՒՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ  
«ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅ»  
ՄԱՆԿԱՊՏԱՆԵՎԱՆ ԵՐԳՉԱՆՈՒՄԻՆ  
Հովանաւորութեամբ՝  
ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՄ. ԽԱԶԵՐԵԱՆԻ  
(Առաջնորդ Լիբանանի Հայոց թեմին)  
Գեղարուեստական ղեկավար եւ խմբավար՝  
ԳԱՅԻԱՆԷ ՍԻՄՈՆԵԱՆ - ՏԵՐԵԱՆ  
Հովանաւորութեամբ՝  
Տեղի կ'ունենայ այսօր՝ Շաբաթ, 27 Ապրիլ 2002, երկույեան ժամը 6:00ին, «Յովհաննէ Պողոսեան» սրահին մէջ, Պուրճ Համուտ:  
●Տոմսերը կարելի է ստանալ Համագայինի «Լեւոն Ծանթ» Մշակութային Կեդրոնէն եւ գրատուն «Նարեկացի»էն:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵԿԵՅԻՈՅ  
ՀԱՄԱԼՄԱՐՆԱԿԱՆ  
ՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՌԻԹԻՒՆ  
ԵՇՆՈՒ  
ԴԱՍԱՆՕՍՈՒԹԻՒՆ  
«WHAT IS SPIRITUALITY»  
Պիտի դասախօս՝  
Ն. Ս. Օ. Տ. Ս. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ  
Տեղի կ'ունենայ այսօր՝ Շաբաթ, 27 Ապրիլ 2002, երկույեան ժամը 6:30ին, ԵՇՆՈՒ Կեդրոնատեղիին մէջ, կաթողիկոսարան, Անթիլիաս:

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 87ԱՄԵԱԿ - ՀԱՅԿԱԿԱՆ ԳԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 87ԱՄԵԱԿ -

ԱՆՑԵԱԼԻ ՀԵՏՔԵՐՈՒՆ ՎՐԱՅ

Անդրանիկին ընկե-  
րակցութեամբ կ'ուղ-  
ղուինք դէպի Թոմարգա:  
Մեծ չէ Թոմարգան,  
պատմական Թոմարգան:  
Պօղոս-Պետրոս եկեղեցին  
կանգուն է: Անոր երկա-  
թէ դռներուն ճեղքէն կը  
դիտենք ներսը: Եկեղեցին  
այժմ հին անիւներու պա-  
հետանոց մըն է: Լու-  
սանկարներէն մեզի ծա-  
նօթ կապոյտ նաշխա-  
զարդ սրինքը եւ որմ-  
նանկարները գրեթէ  
անվստի են: Եկեղեցոյ  
դուրսի պատէն ծեփի  
կտորներ կ'առնենք իր-  
րեւ սրբազան յիշատակ-  
ներ: Ուխտաւոր մը կը  
նախընտրէ Թոմար-  
գան, եւ կ'ուղղուինք  
դէպի Եփրեզ, ներկայիս՝  
Տեւեթի: «Երեք տարի  
առաջ մեռաւ Եփրեզի  
վերջին հայր՝ Վարդգէս  
Եալչընը», կը յիշէ Անդ-  
րանիկ: Գիւղաքաղաքին  
կեդրոնը գտնուող հայ-  
կական հսկայ եկեղեցին  
չինարարութեան մէջ կը  
գտնենք: Տանիքը կ'եզեր-  
ւի փայլուն մետաղով,



Թոմարգայի Ս. Պօղոս - Պետրոս եկեղեցին

Ջրամբարին: Դիմացը Պե-  
րիթ լեռն է: Զառիվերը  
յաղթահարող պատին  
միօրինակ վնասներ կը  
խառնուի «Զէյթունցի-  
ներ» երգը: Ըստ աւան-  
դութեան, «Երբ յղի կիներ  
քաղաքին արեւելեան  
կողմը գտնուող սառնո-  
րակ աղբիւրին ջուրը կը  
խմէին, առիւծ գաւազ  
լոյս աշխարհ կը բերէին»:  
Աղբիւրին քարէ երեք խո-  
ռոչներէն առատ ջուր կը  
բխի: Յուշարձան-աղբիւ-  
րի ճակատին կենաց ծա-  
ռեր են եւ յանգրութեան  
նշաններ: Մէջտեղի քարէ

ՀԱՅ ՄԱՆՈՒԿԻ ՄԸ ՍՐՏԷՆ  
ԲԽԱԾ ԱՂՕԹՔԸ՝ ԿՏԱԿԻ  
ՍՐԲՈՒԹԵԱՆ ԱՊԱՅՈՅՑ  
ԵՒ ԱՊԱԳԱՅԻ ՅՈՅՍ

23 Ապրիլի երեկոյեան ժամը 8:30 է:  
Անթիլիասի մայրավանքին շրջափակին մէջ  
գտնուող Նահատակաց յուշարձան մատուռը կը  
մտնեմ՝ ծաղիկ մը ձեռքիս:

Ներս խնդրեմ է մարդոցմով տխուր դէմքով եւ  
յիշատակի ու տարիներու կտակի բեռէն ծանրացած  
նայուածքով անձեր կ'ելլեն ու կը մտնեն՝ անգամ մը  
եւս ծունկի գալու Մեծ Եղեռնի նահատակներուն յի-  
շատակին, անոնց հոգւոյն մօմ մը վառելու, ծաղիկ  
մը գետեղելու եւ աղօթք մը մըթմթելու:  
Կը մօտենամ խորանին եւ կը խաչակնքեմ:  
«Պապա, հոս դնեմ ծաղիկը», կը հարցնէ քոյս կե-  
ցած շուրջ եօթնամեայ մանուկը, որ իւրաքանչիւր  
ձեռքին ծաղիկ մը սեղմած՝ շուրջը կը նայի:  
Ան կը մօտենայ խորանին եւ ալ ձեռքի ծաղիկը  
գփուարութեամբ կ'երկարէ դէպի խորան: Ապա շի-  
տակ կը կենայ, կը խաչակնքէ եւ ...

«Աստուած Պապա, այս ծաղիկը իմ կողմէս է. Քեզ-  
մէ կը խնդրեմ, որ մեր նահատակներուն հոգիները  
քու արթնքովեանդ մէջ պահես եւ աշխարհի վրայ  
գտնուող բոլոր, բոլոր հայերը պահպանես թշնա-  
միին վտանգէն: Նանկա կ'ըսէր, թէ մեր պապուկներ  
ըլ շատ չարարուեցան եւ շարդուեցան, ան նաեւ  
կ'ըսէր, թէ մեր թշնամին ու մեզ սպաննողը թուրքն  
է: Ով Աստուած, դուն պատժէ այդ թուրքերը, որոնք  
այդքան ցաւ, տխրութիւն եւ արցունք պատճառեցին  
իմ նանիկիս, ան ամէն անգամ որ թուրք բառը լսէր,  
նախ կը բարկանար, ապա երկար, շատ երկար կու-  
լար: Նանկա նաեւ ինծի կ'ըսէր, թէ պէտք է Քեզմէ

ՆՈՐԱ ԲԱՐՍԵՂԵԱՆ  
Շար.՝ էջ 9

ՏԻՐ ԶՕՐԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ  
ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԵԶՐԱՓԱԿՈՒՄԸ

23 Ապրիլին ՏԻՐ ԶՕՐԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՄԱ-  
ԳՈՒՄԱՐԻՆ մասնակիցները այցելեցին պատմական  
Եփրատ գետը, որ եղաւ հազարաւոր հայերու գերեզ-  
մանը:

Նոյն օրը երեկոյեան տեղի ունեցաւ Համագումար-  
ի վերջին կլոր սեղանը, որ ներկայիս ուղարկու-  
թիւնը կեդրոնացուց հայ եկեղեցիէն ունեցած իրենց  
ակնկալիքներուն վրայ «Հայ երիտասարդ ինչ կը  
սպասէ հայ եկեղեցիէն» նիւթով: Զրոյցը վարեց Գրի-  
գոր Ալլոզեան, մասնակցութեամբ Համբարձում Թո-  
րոսեանի, Ալեքսան Աշեռեանի, Քրիստին Գազանճե-  
անի եւ Լալա Պարտազեանի:

Երիտասարդները գանազան մտահոգութիւններով  
եւ առաջարկներով մտեցան հայ եկեղեցոյ եւ իւրա-  
քանչիւր իր դիտանկիւնէն ըսաւ, թէ ինչ ակնկալիք-  
ներ ունի հայ եկեղեցիէն: Կարծիքներու այլազանու-  
թիւնը համարուեցաւ այն գաղափարով, որ հայ եկե-  
ղեցոյ հոգեւոր եւ ազգային վերագարթօնքը նոր  
թափ ստանայ՝ պատրաստուած երիտասարդութեան  
մասնակցութեամբ:

Համագումարին մասնակցողները աննախըմաց  
առիթու ունեցան ներկայ գտնուելու ՏԻՐ ԶՕՐԻ Ս. Նա-  
հատակաց հայկական վարժարանի աշակերտութեան  
գեղարուեստական յայտագիրին:

Նոյն օրը երեկոյեան երիտասարդները մասնակցե-  
ցան Նահատակաց Յուշարձանի մէջ տեղի ունե-  
ցած հսկումի արարողութեան:

24 Ապրիլին Համագումարին մասնակիցները  
խմբուեցան Ապրիլեան յուշարձանի խաչքարին ու ան-  
մար բոցին դիմաց, ուր Վրոյր վրոյ՝ Տէմիրճեան կար-  
դաց Համագումարի յայտարարութիւնը, որուն մէջ  
ամփոփուած էր Համագումարի արժեւորումն ու եզ-  
րակացութիւնը: Անդրադառնալով ներկայ արհես-  
տագիտութեան եւ զարգացումներուն յայտարարու-  
թեան մէջ նշուեցաւ, թէ ազգովին եւ անհատապէս  
կարելի չէ հեռու մնալ այս բոլոր բարգաւաճումէն  
եւ այդ պատճառով պէտք է երիտասարդութիւնը դի-  
տակցի թէ շատ մեծ աշխատանք ունի տանելը հայ  
եկեղեցոյ կեանքին ու առաքելութեան վերանայման  
եւ վերածրագրաւորման գործընթացին մէջ: Կարեւոր  
են անհրաժեշտ համարուեցաւ նաեւ եկեղեցոյ վերա-  
նորոգութիւնը: Նկատի ունենալով, որ եկեղեցին մեր  
քրիստոնէութեան եւ ազգային դիմագիծին ու գոյու-  
թեան գլխաւոր կուռնան է, անիկա պէտք չէ սառած  
ու քարացած մնայ: Եկեղեցոյ բոլոր գաւազները  
պէտք է գտնեն իրենց յարմար հոգեւոր սնունդը: Կար-  
եւոր նկատուեցաւ նաեւ հոգեւոր կեանքի վերագոր-  
ծօնքը ծիսական ու պաշտամունքային մարզերուն,  
հաւաքական թէ անհատական կեանքին մէջ: Երիտա-  
սարդութեան ձգտումն է վերականգնել հայ եկեղեց-  
ոյ հոգեւոր դիմագիծը, վերանայել ծիսական կեանք-  
ին ու պաշտամունքային կերպերուն, երիտասար-  
դութիւնը ներգրաւելու ազգու միջոցներու ձեռնար-  
կուով, վերաեսութեան ենթակից մեր եկեղեցոյ  
վարչական դրութիւնը եւ աշխատանքային մեթոտները,  
պատասխանատուութիւններ վստահելով երիտա-  
սարդութեան, օժանդակել եկեղեցիին աշխարհը տագ-  
նապնդող ընկերային եւ բարոյական զփուարու-  
թիւններուն յարմար լուծումներ գտնելու, ինչպէս  
նաեւ ազգային եկեղեցական հաւաքական կեանքին  
մէջ հետեւողի դերի մէջ չըլլալ, այլ ծրագրողի եւ կազ-  
մակերպողի:


Համագումարի վերջին բաժինով երիտասարդները  
մասնակցեցան մէկուկէս միլիոն նահատակներու յի-  
շատակին մատուցուած Մ. պատարագին:



Խաչքար՝ Ջեյթունցի

իսկ ներսը՝ պատերուն  
վրայէն սուր գործիքնե-  
րով կը քերթուին հայկա-  
կան որմնանկարներն ու  
գրութիւնները՝ ի նպատ-  
ախորանին առջեւ գոյա-  
ցած աղբակոյտին: Աշ-  
խատանքային եռուզեռը  
կը դադրի քանի մը  
վայրկեանով: Պատմու-  
թեան մէջ թերեւս առա-  
ջին անգամ ըլլալով՝  
թուրքը կը խոստովանի,  
որ եկեղեցին հայկական  
է եւ մզկիթի կը վերած-  
ւի, յետոյ կ'աւելցնէ:

«Վկայականին» վրայէն  
սրբուած է հայերէն  
գրութիւնը, սակայն  
մասնագիտական ֆանքը  
կանայ վերականգնել  
զայն:  
1890ին Արուջան  
անուանով բժիշկ մը կ'այ-  
ցելէ Զէյթուն եւ փոխոյի  
պատուաստով մէկ օր-  
ւան մէջ թունաւորելով  
կը սպաննէ արու սե-  
րունդը՝ 500 երեխայ:  
Դիմացը քաղաքն է,  
աւելի ճիշդ՝ նախկին քա-  
ղաքը: Զէյթունը, այսօր-



Եվրեկ - հայկական եկեղեցի

«Կը շինենք, չենք քան-  
դեր...»:  
Մենք այստեղ հրա-  
ժեշտ կու տանք Անդրա-  
նիկին եւ Կապողովկա-  
յէն դարձեալ կ'ուղ-  
ղուինք դէպի Կիլիկիա՝  
Զէյթուն: Ժամբան եր-  
կար է, սակայն ամբողջ  
յաւերթութիւն մը չի բա-  
ւեր տեսածդ վերապրե-  
լու, խոհեղ դասաւորե-  
լու եւ արդարութեան  
ուրուականին հետ հաչ-  
ւեկցելու համար:  
Զէյթունի գառնիվերին  
վրայ ենք: Ժամապարհին  
երկու կողմերը խաղողի  
աղիներ են: Զախին խո-  
րունկ ձորն է, որուն մէ-  
ջէն կը հոսի Զէյթուն գե-  
տը, որ կը խառնուի Զէյ-  
հանի փերուկագոյն

ւան Սիւլէյմանլըն, կա-  
նաչ գիւղ մըն է, փոքրիկ  
ձորակներով բաժնուած:  
Ուր են արդեօք Սուրենի-  
եան, Շաւրթեան, Ենի-  
տունեան, Եագուպեան  
թաղամասերը... Ամայի  
վանքատեղերէն զօղանջ  
կը լսուի... լսողական  
պատրանք... Անձրեւի  
տաք մեծ կաթիլները կը  
թրջեն խոհեղ:  
Զէյթունի մէջ գրեթէ  
նոր տուն չկայ: Հին,  
ճոճան դուռերու ճեղ-  
քերէն մեզ կը հետապն-  
դեն տեղաբնակ կիներուն  
հետաքրքիր աչքերը: Հին  
ջաղաքի փոշիներուն  
տակէն մազափունջ մը  
կ'երելի: Խնամքով կը քա-  
կենք զայն եւ այժի մա-  
յով հիստուած, քայքայ-

ՌՈՊԷՐԹ  
ԱՆԱՔԵԼԵԱՆ  
(Շար. 4 եւ վերջ)  
Շար.՝ էջ 8

«ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅ»  
ԵՐԳՉԱԽՈՒՄԻՆ  
ԱՆԴՐԱՆԻԿ ՄԻ ՏԻՆ



Համերգային գործունէութեան զուգահեռ, մեծ  
կարեւորութիւն ունի, արխիւային թէ երաժշտական  
ստեղծագործութիւններու տարածումի առումով,  
երգչախումբերու ձայնագրութիւններու աշխատան-  
քը: Գեղարուեստական արժէք ունեցող քանի՞ հա-  
մերգներ որակեալ ձայնագրութեան չզոյնութեան  
պատճառով անհնար կորած են եւ սոսկ իրրեւ յիշողու-  
թիւն մնացած են համերգին ներկայ փոքրաթիւ ան-  
հասներու մօտ միայն: Եւ ինչպիսի նորագոյն երգեր  
նոյն պատճառներով չեն տարածուի մեր առօրեայ  
կեանքին մէջ: Մանկապատանեկան երգչախումբերու  
պարագային կը բաւէ յիշել Ալեքսան Մնակեանի  
«Նանոր», «Արտուտիկ» կամ Հ. Յ. Դ. Պատանեկան  
Միութիւններու երգչախումբերուն արհեստավարժ  
կերպով իրագործուած ձայնապնակները, որոնք մին-  
չեւ օրս ալ այդ մարզի լիրանանեան յիշատակելի իրա-  
գործումներ են եւ տուններու թէ ձայնափունջներու  
մէջ փնտուած ձայնագրութիւններ:

Այս կարեւորութեան դիտակցումով է անկասկած,  
որ Հայէպի «Մեսրոպ Մաշտոց» երգչախումբը վեր-  
ջերս հրապարակած է իր անդրանիկ սի. տի.ն, որ գե-  
ղարուեստական իր բովանդակութեամբ արժէքաւոր  
իրագործում մըն է եւ նոր օղակ՝ սփիւռքահայ ման-  
կապատանեկան երգչախումբերու գործունէութեան  
մէջ:

«Մեսրոպ Մաշտոց» երգչախումբը ստեղծուած է  
Բերիոյ թեմի Ուսումնական խորհուրդին կողմէ եւ  
անոր մաս կը կազմեն տեղւոյն ազգային վարժարան-  
ներէն շուրջ հարիւր աշակերտներ: Գեղարուեստա-  
կան ղեկավարն ու խմբավարն է Երեւանի Կոմիտասի  
անուան հարձրակոյն երաժշտանոցի շրջանաւարտ  
Գայրան Միմոնեան-Տէրեան, որ նախապէս խմբա-  
վարական աշխատանք տարած է նաեւ հայրենի «Արե-  
ւիկ» մանկապատանեկան երգի եւ նուազի համոյթին  
մէջ:

Սի. Տի.ն նուիրուած է երգչախումբի ծննդեան  
տասնամեակին եւ երկնեանց պատկեր մը կը ներ-  
կայացնէ բազմալեզու եւ բազմարձնոյթ երգերու իր  
բովանդակութեամբ: Հոն տեղ գտած են նաեւ ռազ-  
մասիրեանսիրական երգերու շարք մը: Բոլոր երգե-  
րը մատուցուած են սիմֆոնիկ լարային նուազակցու-  
թեամբ, որոնք ընդունելի սրակով պատրաստուած են  
ստեղծ. Բաճիքի Ապրիլեանի կողմէ:

Ընկերային կեանքին լուսանկարներով գունա-  
զարուած ներդրի պրակը կը բովանդակէ նաեւ կա-  
տարուող երգերուն բառերը: Սի. Տի.ն տասնութ եր-  
գերն են՝ «Փիլոսոֆ», «Ռոյնիկ Հում», «Եւ Թըֆլ Ալ-  
ժամիլ», «Մոնամի լա սուէր», «Պուլ - պուլ մկնիկ»,  
«Մաքսոնալազ ֆարմ», «Եւ Մարտիք», «Լօ ֆա  
փա - լօ ֆա փո», «Ժրտալի պու Սալմը», «Եւ քա-  
մար», «Մերլ», «Երգ Արցախեան», «Դրոյի երգը»,  
«Հայոց բանակ», «Նախիջեւան», «Ազատ ոգին Հա-  
յաստանի» «Քեզ Դաշնակցութիւն» եւ «Կարմիր կա-  
կաչներ» երգերը իրրեւ յօրինուած եւ կատարուած ու-  
շագրու նորութիւն է Ալեքսի Գաթրեանի խօսքե-  
րով խմբավար Գայրան Միմոնեան-Տէրեանի «Նախի-  
ջեւան» երգը:

Սի. Տի.ն եզրող պրակէն թէ անոր երաժշտական  
կատարողական բովանդակութեան ակներեւ է այն  
մեծ ոգին, որ ներդրած են շուրջ հարիւր հայէպահայ  
աշակերտները, խմբավարական թէ կազմակերպա-  
կան աշխատանքները իրենց ուսերուն վերցուցած  
երգչախումբին պատասխանատուները: Այսպիսով  
երգչախումբը արդէն իսկ ունի իր անդրանիկ յուշ-  
կոթողը, որուն բովանդակութեան մասնակիցները  
այսպայսի պիտի ունենան գոյողիկ զգացումներ,  
ամէն անգամ որ անոր ունկնդրութեան վայելքին  
յանձնուին: Այսպիսով նաեւ բազմաթիւ ծնողներ  
իրենց փոքրիկներուն համար արդէն իսկ փոքրաթիւ  
սի. տի.ներով մանկապատանեկան ձայնագրաններ  
հարստացնելու առիթ մը եւս ունեցան, ինչ որ արժե-  
նի է տարածուած:

Ընդառաջելով Համագոյնի «Կարկաչ» մանկա-  
պատանեկան երգչախումբի հրաւերին, «Մեսրոպ  
Մաշտոց» այս երեկոյեան ժամը 6:00ին, Երոյթ պիտի  
ուրենայ Պուրճ Համուտի «Յովհաննէս Պօղոսեան»  
սրահին մէջ: Այնուհետեւ փոխադարձաբար «Կար-  
կաչ» պիտի հիւրընկալուի Հայէպի մէջ:

Չ. Բ.

**ՀԱՄԻԿ ԱՍՍՈՒՆԵԱՆԻ ՀԱՅԵՆ**  
HAMPIG SASSOUNIAN  
CSP - L.A.C. B - 5 - 131 44750  
60-TH ST. WEST LANCASTER,  
CA, 93536 — USA

# Գրական Էջ

## ԱՅՍ ՀԱԿԱԹՈՒՐՔ ԹՈՒՐՔԵՐԸ...

Արդարությունը պիտի կապեն սուրբի ծայրը,  
Քաղաքակրթությունը՝ ձիուս պայտերուն,  
Պիտի կործանեն ամեն բան...

ՉԻԱ ԿԵՕՔ ԱԼՓ

Գթությունը պիտի կախեն եաթաղանի սայրին,  
Իմաստությունը՝ հրապենիս փամփուշտին,  
Իսկ քաղաքակրթությունն ալ՝  
Նժոյգիս ետեւի պայտին...

(21-9-1911)

ԵՆԻՍ ԱՆԻՆ ՊԵՅ

Ջիրար կրկնող եւ իրենց արձաժարաւ ախորժակներով իրարու հետ մրցակցութեան ելած Ջիւ Կեօք Ալփ եւ Էնիս Անին Պէյ կոչեցեալ այս երկու գտարիւն թուրքերը, սխալմամբ, բանագող չկարծէր: Մեծ եղեռնէն կարճ ժամանակ մը ատաջ եւ մէկ - երկու տարի տարբերութեամբ արտասանուած վերի բրբառական ընթացքին անկրկնելի ախոյեանները, դարձեալ սխալմամբ, ի միջի այլոց գրողներու կամ գրչակներու հետ չշփոթէր: Ապրիլեան եղեռնէն թիչ առաջ իր բանաստեղծութիւնները հրատարակութեան տուած թուրք բանաստեղծ Ջիւ Կեօք Ալփ, որ այնքան ամբողջական ձեռով ներկայացուցած է իր ներաշխարհը դժոխակերպած դարաւոր թրքութիւնը, ուրիշ մէկը չէ, եթէ ոչ Իբրիհատ կուսակցութեան կեդրոնական կոմիտէի մէկ վտանգաւոր գեղարուեստիչը, իսկ անոր դէմ իր տաղաչափական մկանները լարող միւս արձագանքաւ՝ Էնիս Անին Պէյ անուն համալսարանական արիւնաբերու մը, որ վերի իր արիւնդու ուխտը արտասանած է Ֆաթիմ Սուլթան Մեհմէտի դամբարանին մէջ ծննդաբաժնի մէկ պահունգ...

Անհատաւորի է, բայց իրապէս իբր, որ ետեհամուկներու դասին մէջ կան նաեւ բանաստեղծ կոչուած մարդիկ: Բայց ինչո՞ւ պարմանալ: Պէտք չէ մոռնալ, որ այս առիթով մենք գործ ունինք թուրքի մը հետ, իսկ թուրքը թուրք է... մարդ ըլլալէ առաջ ու բանաստեղծի դասին պատկան արժանանալէ ետք: Աստիքը թուրքի մը թուրքը ամենայն հարազատութեամբ ներկայացնող լիիրան տիպարներ են, ոչ մէկ կասկած: Անհատաւորին՝ միւսն է, հակաթուրք թուրքերը, որոնց անսահման դիմադրական Մեծ եղեռնէն առաջ Կիլիկիոյ 1886ի եւ 1908ի կոտորածներու ընթացքին, 1915ի Ցեղասպանութեան բոցներու մէջ իրբեւ անպատասխան դռները պատրաստարար զգնելու մարդիկ կամ իրենց գայրոյրն ու նողկանքը գոռացող ճշմարիտ մտաւորականներ:

Թեկուզ հագուածքի, թեկուզ սակաւաթիւ: Կարողացէք բովի սիւնակներով արուած Մուհամմատ Ուալի էտտին Եկեմի գայրոյրը, Համուտլլա Սուլթանի Պէյի լուսամիտ մարդու խօսքերը եւ իր ակադեմիական կոչումին հաւատարիմ թաներ Աքչամի թեկուզ կիսաձայն խոստովա-

նութիւնը, եւ դուր համոզուելով պիտի համոզուիք, որ Ատանայի, Սվազի եւ այլ կոտորածներուն ի տես 1900ական թուականներուն «Սեւ էջեր», «Փորձութիւններ», «Մանօթն ու անձանօթը» եւ «Ազատութեան նահատակ մեր հայ եղբայրներուն ջարդերը» խորագրեալ միջակ ծաւալի յօդուածներ եւ երկարաչափ վաւերագրութիւն ստորագրած Մուհամմատ Ուալի էտտին Եկեմ առանձին չէ, իր բողոքէն շուրջ 90 տարի առաջ Միտեռնակաբերդի անմար բոցին առջեւ խոնարհեցաւ այլ թուրք մը՝ Թաներ Աքչամ եւ իր ժողովուրդին անուով ներդրութիւն խնդրեց:

Բարեբախտաբար: Բարեբախտաբար այսօր նաեւ կան պատմութեան մուր ու արիւնդու էջերը բանալու եւ պատմական ճշմարտութիւնը պարզաբանելու մտաւորականի քաջութեան տեղ սակաւաթիւ թուրքեր, որոնք շարքային թուրք ու մարդի չեն, ծագօք են պատմութեան անպատմելի ծալքերուն՝ թուրքին սարքած դժոխքին: Մօտիկ անցեալին հագիւ լսելի եւ ամչկոտ կիսախոստովանութիւններով, բաւական գոռոչօրեց ցեղասպանութեան փաստին անդրադարձած Ահմէտ Ռեֆիքներու, Մեթ Ռունջաներու, Տողան Աւջըղուներու եւ ուրիշներու ամօթած արտայայտութիւնները, փաստօրէն, պատմութեան անցած պատմութիւնը դարձան, երբ 1992ին, Պոլսի մէջ, Թաներ Աքչամ հրատարակեց «Թուրքական ազգային ինքնութիւնը եւ Հայկական Հարցը» խորագրեալ մենագրութիւնը, որ օրին քաղաքական ռուսիի ազդեցութեամբ գործեց:

Ճիշդ է, որ գրքագնութեան մեղքով գիրքէն դուրս դրուեցան Մեծ եղեռնի հանրութիւնը պատկերող փաստագրական լուսանկարները, այնուամենայնիւ, հետաքրքրութիւնը այնքան մեծ եղաւ, որ 1993ին լոյս տեսաւ հատորին երկրորդ հրատարակութիւնը եւ անմիջապէս սպառեցաւ:

Սպառեցաւ, սակայն բացաւ դեպի ճշմարտութիւն առաջնորդող թեկուզ նեղ, բայց լուսաւոր նամբայ մը, որմէ վերջին տարիներուն սկսան ընթանալ ճշմարտութեան հետ հաշտուելու տրամադիր նաեւ այլ թուրքեր, բրբառական ծագօք «աւանդութիւն»ները խախտող նոր հակաթուրքեր...

Ս. ԿԻՐԱՎՈՍԵԱՆ

## ԱՅՍ ՎԱՐԴԱՊԵՏԸ

«ԹՈՒՐՔ ԵՐԱՇՅՈՒԹԻՒՆ ԱՆՈՒՆՈՎ ԲԱՆ ԳՈՅՈՒԹԻՒՆ ՉՈՒՆԻ. ԻՆՉ ՈՐ ՈՒՆԻՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԱՇՅՈՒԹԻՒՆ Է» ՓՐՈՖ. ԱՍԵՆ ՆԻՍԵՐ ԶՈՒՐԱԹ

(«ՎԱՐԱՍ», 17-2-1955)



Այս հայ հոգեւորական տարիներու տրանջան աշխատութեան իր պրպտող մտքին շնորհիւ հայ երգիչն եւ հայ երաժշտութեան նոր թուրք տոնակ է: Անատոլիոյի զաւակ Կոմիտաս Վարդապետ, հակառակ իր աստուածարանական եւ համալսարանական կրթութեան, արհամարհելով պերճանք, ճոխութիւն եւ պաշտօն, նետուեցաւ դէպի հայ զիւղերը եւ հայ գեղջուկին հոգեկան ներշնչութեան երկրին իրական արտայայտութիւնն եղող հայ երգը մէկիւմ-մէկիւ գլխաւորեց եւ անոնց այնպիսի՝ կենդանի շունչ եւ ներդրակութիւն տուաւ, որ այսօր հայ երգը հայ մշակոյթի ներկայանալի գանձերէն մին կը հանդիսանայ:

Եւ ծոյ կեանքին վարժուած ըլլալով՝ չեն ուզեր իրենց սահմանափակ կեանքէն դուրս նետուել: Այս վարդապետին պէս անոնք ալ կրնան իրենց ազգին օգտակար ըլլալ: Պրպտող միտք մը եթէ թուրք գիւղերը շրջագայի, ո՞վ գիտէ ժողովրդական երգերու ինչպիսի՞ թանկագին գանձերուն պիտի հանդիպի, որոնք թուրք ցեղին զգայուն եւ խորհող մտքին արժէքը աւելի պիտի բարձրացնեն:

Ճշմարտութիւն է եւ մենք պարտաւոր ենք խոստովանիլ, որ հայ ազգը դարձեւ ի վեր մեր մշակութային կեանքին մէջ իր յառաջապահի մասնակոր տեղը ունեցած է: Թուրքերի ո՞ր կողմն ալ երթանք, Անատոլիոյ ո՞ր անկիւնն ալ ըլլանք, հայ միտքը, հայ ստեղծագործ ձեռքը «Տոս եմ» կ'ըսէ:

ՀԱՄՏՈՒՆԸՆՍ ՍՈՒՊԿԻ ՊԵՅ

(1913)

## ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՆԱՀԱՏԱԿ ՄԵՐ ՀԱՅ ԵՂՋԱՅՐՆԵՐՈՒՆ ԶԱՐԴԵՐԸ

... Երբ Սվազի ընկալիչները իմացան, թէ ինչ պատահած է հայերուն, անոնք երկու խումրի բաժնուեցան: Իսլամներու խումրը սկսաւ տեսնել նախապատրաստութիւններ՝ կոտելու համար հայերու դէմ, եթէ անոնք փորձեն յարձակիլ իրենց վրայ, ինչ կը վերաբերի հայերուն անոնց մեծաւորները գացին խումր մը օտարներու մօտ եւ հարց տուին անոնց, թէ գիրքնք վախցնող որեւէ տուեալ կայ: Վերոյիշեալ օտարականներն ալ գացին այդ օրերու Սվազի կուսակալին՝ Նալիլ Ռաշիտ փաշայի մօտ եւ անկէ խնդրեցին հարցին պարզաբանուումը: Ան ըսաւ իրենց, թէ իր իշխանութեան շրջանին չափաւոր ապահովութիւն կը տիրէ եւ ոչ մէկ վախ կայ, որ մտահոգիչ դէպքեր պատահին եւ թէ՛ ինք լրջօրէն կը հսկի, որպէսզի իր քաղաքացիները հանգիստ քնանան: Ցետոյ, իսլամներուն մէջ շրջալի ըրին տարածայնութիւններ, թէ՛ հայերը կազմ ու պատրաստ են: խումր մը հովիւներ դիտել տուին, թէ երկու հայեր ճամբան տեսած են իսլամ չորս կիներ, կտրած են անոնց ճամբան եւ ըսած, թէ՛ վաղը ձեր տղամարդիկը պիտի սպաննենք, ձեզմէ դժանք իրրեւ ազախին պիտի տանինք, իսկ ուրիշներ ալ՝ իրրեւ մեզի զաւակ ճնանոցներ: Ասիկա աւելի բորբոքեց իսլամներուն ատելութիւնը, մինչ հայերը ոչինչ գիտէին իրենց մասին ըսուած նման խօսքերու մասին: Սակայն անոնք սկսան լրջօրէն մտահոգուիլ, երբ իսլամներու դէմքերուն սկսան տեսնել գայրոյթի նշաններ եւ իրենց դէմքերը դարձուցին անոնցմէ: Կարճ ժամանակ մը չանցած՝ իսլամները սկսան հայերը սպաննել ու կոտորել, մտան վաճառատուները, որոնց գուռները եկաթէ էին եւ կը գտնուէին գեղակերտ շրջան մը, որ Տաղ Նան կը կոչուէր: Բրիչներով սկսան հարուածել դուռները եւ կրակել, մինչեւ որ անոնք բացուէին: Ոչինչ ձգեցին խոսնութիւններուն մէջ: Կուսակալութեան կեդրոնէն՝ գինուորներն ու կուսակալը պահանջեցին վերջ տալ այս արարքներուն, սակայն անոնք կանդ չառին: Եւ երկու օր տեսած ջարդերէ ետք, կոտորածները կանգ առին: Եւ ինչ որ մարդու մարմինը կը փշաքողէ, այն է, որ այդ գազանները սողուններով կը մորթէին իրենց ձեռքը անցած հայերը: Փոխ քոմսնտան Մուհամմատ Նալուսի փաշան, որ երկու տարի առաջ մահացաւ, տեսաւ խումր մը յարձակողներ, որոնք պաշարած էին կօշակար հայ մը, որ անոնց ձօնակներ կը կարէր եւ պարտական էին անոր: Հայր օգնութիւն աղբրեց քոմսնտանէն եւ ըսաւ անոր: «Տէր իմ, կը սպաննեն ծառայ եւ ան անմեղ է: Վեհանձնութեամբ հրահանուէ անոնց, որ կեանք փոքրիկ զաւակներու շնորհին»: Քոմսնտանը ըսաւ: «Դուս կեանքը եւ եւ զաւակներդ ալ կեանքներ են»: Ապա, այս խեղճը շրջապատողներուն ձեռքի շարժումով մը հասկցուց, որ իրենց գործը վերջացնեն: Այդպէս ալ ըրին: Այս ստորները առիթը օգտագործեցին եւ սկսան առեւտրել աղջիկները եւ հարստութիւնները ամրոջութեամբ կողպտել: Այսօր մենք կը տեսնենք, որ հայ վաճառականները իրենց հանապաօրեայ հացը ապահովելու և փինակի չեն եւ իրենց կողպտուած դրամներով հարստացած են աւագաններ, որոնք վաճառականներ դարձան:

Եթէ իսլամները արդարութիւն ընէին իրենց քրիստոնեայ եղբայրներուն, աւելին՝ եթէ արդար

գտնուէին իրենք իրենց հանդէպ, միանային եւ դառնային մէկ ձեռք՝ ընդդէմ բռնակալ կառավարութեան, երկար տարիներ առաջ տիրացած պիտի ըլլային իրենց ազատութեան եւ պահած՝ իրենց եղբայրներուն սէրը:

Այո՞, հայերը գայրացան ընդհանրապէս իսլամներէն եւ մասնաւորապէս մեզմէ՛ թուրքերէն, եւ բանակալութեան հետ չէ, որ իրարու հետ համաձայնած՝ մեզ թշնամիներ նկատէին: Եթէ այս մէկը ճիշդ է՝ անիկա պատահական դէպք է, սակայն անոնք այդպէս չէին: Անոնք որքա՞ն լացին մեր արցունքին հաշուոյն, մեզի հետ որքա՞ն բաժնեցին մեր կորուստները եւ մենք արգիլեցինք անոնց մասնակցիլ մեր ուրախութիւններուն: Անոնք կը կարծէին, թէ մենք իրենց բաժնեկիցներ ենք՝ բռնակալներու բռնութեանց դէմ բողոքելու զօժով, բայց մեզ տեսան իրրեւ անտարբերներ, որոնք ո՞չ մէկ շարժում կը կատարեն եւ ոչ մէկ մեղադրական խօսք կ'արտասանեն: Ցետոյ, չիտուսափեցանք մեր ձեռքերը արիւնով ներկելէ, երբ ամէնէն աւելի մենք պէտք ունէինք, որ անիկա չհեղուէ:

Բազմաթիւ հայեր լքեցին իրենց միութիւնները, միացան մեր ազատատենչներուն, ըսին՝ մենք օսմանցիներ ենք, հետեւաբար՝ օսմանեան թող ըլլան մեր ցանկութիւնները եւ հակադրուեցան իրենց կարգ մը արիւնակիցներուն, որոնք Նոր Հայաստանի վերակենդանացման մասին կը խօսէին: Անոնք ըսին՝ ասիկա անկախելի է եւ, եթէ նոյնիսկ իրականանայ՝ օգտակար չէ:

Կը բաւէ՞ Կը բաւէ՞: Փակենք այս սեւ թուղթը կը բաւէ մեզի, որ օրերը այս թուղթով պիտի վկայեն մեր մասին: Եւ եթէ անկեղծ օսմանցին կարող զայն թող անկէ լուր ու դաս քաղէ, եւ եթէ ոչ-օսմանցին կարող թող վստաւ ըլլայ, որ շատ մեղադրողներ կան, ինչպէս այս տողերը գրողը: Եւ եթէ ջարդերու որբերէն մէկնուեցաւ, ազատ տը մը հանդիպի թուրքի մը եւ ըսէ՛՝ Ես զաւակն եմ անոր, որ սողնով մորթուեցաւ, կամ խաւարին մէջ տեսնուող ջահի նման աչքի կարնոց սեւազգեստ աղջիկ մը ըսէ՛՝ Ես աղջիկն եմ անոր, որ իր սրտին մէջ դաշուենահարուեցաւ, կամ թուրքի մը մեծիսին մօտեհայ իր մուսուրին պաշտելու աստիճան սիրող այրի մը եւ ըսէ՛՝ ո՛ւր է այսինչ բարեկամս, աչքերը արցունքով լեցուին եւ շարունակէ՛՝ գայն սպառելու պատասխանէ՛՝ ոչ, ձեզի հետ սուզի գեղատներ պիտի հագուիմք, պիտի պաշտպանենք ձեր պատիւը եւ պիտի ըլլանք ձեզի օժանդակող ձեր եղբայրները, այնքան ասան որ ողջ ես: Եւ եթէ անցող մը կանգ առնէ ամայի գերեզմանի մը առջեւ՝ որուն անկիւններուն առանձնութիւնը կ'ետայ եւ որուն ուղղութեամբ հովերը ճամբաներու փոշիները կը փչեն, թող ըսէ՛՝ ողջմ'ըն ըսէ՛՝ իմ նահապետ եղբայր, իմ անիրաւուած հայ եղբայր, այո, ո՛ւր ալ ըլլաս՝ մոլեռանդներու հոսեցուցած արիւնը վիրաւորանք ըլլալէ պիտի դադրի, զի ազատատենչները բեզմէ ետք արդարութիւն պիտի գործեն:

ՄՈՒՀԱՍՏԵՆ ՌՒԱԼԻ ԷՏՏԻՆ ԵԷԿԷՆ (Հատուած)

## ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

... Թեմայի ներկայացման ձեռք բաւական տարբերում է բանակէ վարելու թուրքալու ընդունած սովորական ձեւերից: Ցեղասպանութեան կատարուած կամ չկատարուած լինելու հանգամանքը քննութեան չի առնուում: Ընդհակառակը, մեզ հետաքրքրում է այն հարցը, թէ ինչո՞ւ եւն մենք խոսափում այդ իրողութիւնը ընդունելուց: Իրադարձութիւնները, որոնց արդիւնքում նոյնիսկ պաշտօնական թուրքական տեսակետի համաձայն գոհուել են 300 հազար, իսկ ըստ օսմանեան արիւնների 800 հազար հայեր, բացառելով եւ արդարացում են եղանակների վատ պայմաններով, գոհուածներ ի տարեց լինելով, սովով, համաճարակներով, եւ այլն: Ամօ՞ք մեզ: Այդ աշխատութիւններում չկայ նոյնիսկ խցի խայրի նշոյլ այն փաստի կապակցութեամբ, որ ընդամենը մէկ տարում ոչնչացուել են այդքան մարդիկ: Իրենց իսկ՝ թուրքերի խոստովանմամբ, գոհուել են 300 հազար հայեր, իսկ նրանք հանգիստ խցով առում են, թէ «նրանք արժանի էին այդ նախապրիւնը»: Մէկ տարում 300 հազար հոգին գոհուելը նրանց պիտի ստիպեր փշաքողուել (օրական միջին հաշուով հազար գոհ) եւ ապագայում նման արարքների կրկնութիւնից խուսափել: Դրա փոխարէն յիշեալ աշխատութիւնների հեղիակները շարժուում են «ընդ նրանց համար դաս լինի, հակառակ դեպքում կ'անենք նոյնը» տրամաբանութեամբ: Բարբարոսութիւնը դատապարտելու եւ իր կրօնը վաշտաւորելու կ'արդարուի: Մենք պետք է հրաժարուենք նման կեցուածքից:

Ընդդիմախօսները կարող են առարկել, թէ «հայերն էլ թուրքերին են կոտորել»: Մօտաւոր հաշարակներով, 1917ից յետոյ հայերի կողմից վրիժառութեան նպատակով սպանուած թուրք զիւղացիների թիւը չի գերազանցում 40 հազարը: Սպանութիւնը սպանութիւն է եւ այն ոչ մի կերպ չի կարելի արդարացնել: Բայց պետք է աշխարհով անել հետեւեալ հանգամանքը: Թեպետ թուրքերեցում յստակ տարբերակում չկայ «Ցեղասպանութիւն» եւ «կոտորած» հասկացողութիւնների միջեւ, բայց նրանք եւ պիտարբերուում են: Այն, ինչ կատարուեց 1915ին, մի ամբողջ ժողովրդի բնաջնջման նպատակ էր հետապնդում: Այն նախապէս ծրագրուած էր պետու-

րեան, մասնաւորապէս իշխող կուսակցութեան կողմից եւ գործնականում իրագործուեց տեղական իշխանութիւնների ջանքերով: Ինչ վերաբերում է «շարդ» կամ «կոտորած» հասկացողութիւններին, դրանք աւելի շատ տեղական բնոյք են կրում:

Բացի այդ, չի կարելի սեփական մեղքերը արդարացնել ուրիշների կատարած յանցագործութիւններով: Եթէ մենք անիժում ենք կոտորածների եւ Ցեղասպանութեան հեղիակներին, նախ եւ առաջ այդ անեժքը պետք է ուղղենք մեր սեփական արարքների դէմ, պետք է քննադատենք մեզ, քանի որ ուրիշ ազգերի եւ ժողովուրդների նկատմամբ թէ կոտորածներ, թէ՛ Ցեղասպանութիւն իրագործած մի ժողովրդի ներկայացուցիչներ ենք: Եթէ նոյնիսկ այդ արարքների անմիջական մասնակցները չենք, քաջ գիտենք, որ մեր պետութեան կենսագրութիւնը անբասիր չէ: Դրա վառ ապացոյցն է մեր օրերում իրար ժողովրդի նկատմամբ կիրառուող քաղաքականութիւնը:

Հասարակութեան գիտակցութեան մէջ խոր արմատներ է գցել ազգի եւ պետութեան միասնութեան գաղափարը: Նախկինում նման փոխադարձ կապար պետութեան եւ կրօնի միջեւ, ինչն այսօր անընդունելի է: Ժամանակ է տարանջատել ազգ եւ պետութիւն հասկացողութիւնները:

Քանի ղեռ ազգային պատկանելիութիւնը ոմանց տալիս է քաղաքական եւ այլ արտօնութիւններ, իսկ մեղացածների իրաւունքները սահմանափակում, մեզ հագիւ թէ յաջողութիւն լուծել այսօրուան խնդիրները: Ահա թէ ինչո՞ւ Հայերի Ցեղասպանութեան շուրջ առանց այն էլ ուշացած բանակէն սկսելու համար անխուսափելի է քննադատական մօտեցումը բրբառական ազգային ինքնութեանը:

Ազգային պետութեան կողմնակիցները հրաժարում են նկատել այն ճշմարտութիւնը, որ նման պետութեան ստեղծումը ուղղակցուել է լայնածաւալ բռնութեան քայլերով: Ազգային պետութիւնը ստեղծող ազգային ինքնութիւնը իր նպատակին հասաւ այլազգային բնաջնջման գնով:

ԹԱՆԵՐ ԱԲԶԱՄ (1992)

# ՏԵՂԵԿԱՏՈՒԿԱԿԱՆ ԱՐՇԵՍՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԿԱՐԳԻՉ

ՀԱՄԱՑԱՆՑ



ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀ

## ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ «HistoryWiz» ԿԱՅՔԻՆ ՄԷՉ



Համացանցի յառաջընթացի կայքերում բազմաթիվ մրցանակներով տիրացած [www.historywiz.com](http://www.historywiz.com) հասցեով հանրածանօթ կայքը, պատրաստում է «աշակերտներու, ուսուցիչներու եւ պատմութիւնը սիրողներուն համար», ուղադրւած բաժին մը տրամադրած է Հայկական Յեղասպանութեան:

[www.historywiz.com/armenia.htm](http://www.historywiz.com/armenia.htm) հասցեով այս բաժինը կ'ընդգրկէ՝

- Ճեմիֆըր Պրէյնարտի պատրաստած մէկ աշխատասիրութիւնը, ուր ներկայացուած են Հայկական Յեղասպանութեան լուսանկարներ, որոնց կ'ընկերակցին բացատրական պարբերութիւններ՝ Յեղասպանութեան ընթացքը մանրամասնող:
- Հայկական Յեղասպանութեան վերաբերող Ատոլֆ Հիթլերի ակնարկութիւններուն յատկացուած բաժին մը:
- Համաշխարհային Ա. պատերազմը ներկայացնող բաժին:

Կայքը կ'ընդգրկէ «կայքեր, ինչպէս նաեւ՝ Հայկական Յեղասպանութեան նուիրուած գիրքերու բաժին մը:

## ՀԱՅԿԱԿԱՆ ՆԻՒԹԵՐ՝ ՔՈՆԿՐԵՍԻ ԳՐԱԳԱՐԱՆԻ ԿԱՅՔԻՆ (Ա.)


Մ. Նահանգներու Քոնկրէսի գրադարանը, որ կ'ընդգրկէ շուրջ 121 միլիոն գիրքեր, քարտէսներ, ֆիլմի եւ հեռուստիւի յայտագիրներու հաւաքածոներ, կը նկատուի տեղեկութեան երբեք ստեղծուած ամէնէն ընդարձակ շտեմարանը: Թէեւ գրադարանին հիմնական նպատակն է Միացեալ Նահանգներու Քոնկրէսին նախաձեռնած ուսումնասիրութիւններուն աղբիւրներ հայթայթել, սակայն իր 22 ընթացիկ ծրագրերով եւ մեծ ժողովրդականութիւն վայելող համացանցի իր կայքով ([www.loc.gov](http://www.loc.gov)) կը գոհացնէ նաեւ Հանրութիւնը:

Հայաստանի հետ առնչուող նիւթեր Քոնկրէսի գրադարանին մէջ տեղ գտած են 1815-ին ի վեր, երբ Քոնկրէսը գնած է Թոմաս Ճէֆրսոնի (1801-1809 Մ. Նահանգներու նախագահ) անձնական գրադարանը, հարուստ յունական, լատինական ինչպէս նաեւ Հայկական աղբիւրներով:

2000 թուականի տըրեալներով, Քոնկրէսի գրադարանին Հայկական հաւաքածոն կ'ընդգրկէ շուրջ 26 հազար գիրքեր, ձեռագիրներ, արձանագրութիւններ, թերթեր եւ պարբերութիւններ:

Քոնկրէսի գրադարանին համացանցի կայքը եւս հայութեան առնչուող օգտակար նիւթեր կը պարունակէ: Ստորեւ կը ներկայացնենք Հայկական երաժշտութեան յատկացուած բաժինները՝ իրենց շահեկանութեան համար:

Հայութեան հետ առնչուող այլ նիւթեր կը ներկայացնենք Քոնկրէսի գրադարանի պաշտօնական



կայքին փնտնողի գրութիւնը (search engine):

<http://Lcweb2.loc.gov/amem/afcchtml/0046.html>

Ասլանեանի Հայկական Նուագախումբին կատարողութեամբ հայկական պարային երաժշտութիւն, արձանագրուած 23 Ապրիլ 1939-ին: Երաժշտութիւնները ունեն գրելու համար «ըլիք» ընել իւրաքանչիւր արձանագրութեան իտրագրիին վրայ եւ ապա ընտրել «mp3», «real audio» կամ «wav» գրութիւնը:

<http://Lcweb2.loc.gov/amem/afcchtml/0044.html>

Հայկական ժողովրդային երգեր, Մարի եւ Յարգոփ Կոլթիկեանի կատարողութեամբ (17 Ապրիլ 1939):

<http://Lcweb2.loc.gov/amem/afcchtml/0048.html>


Սիրանուշ Ծահագեանի կատարողութեամբ հայկական երգեր, արձանագրուած՝ 30 Հոկտեմբեր 1939-ին:

<http://Lcweb2.loc.gov/amem/afcchtml/0042.html>

Ճօ Պետրոսեանի կատարողութեամբ, արձանագրուած՝ 24 Ապրիլ 1939-ին:

Նշենք, որ վերոնշեալ բոլոր բաժինները կ'ընդգրկեն նաեւ յաւելեալ տեղեկութիւններ եւ լուսանկարներ՝ մենբրոզ կամ երաժշտական գործիք մը նուագող արուեստագէտին մասին:

## ՀԱՄԱՑԱՆՑԵՆ ՖԻԼՄԵՐ ԵՒ ԵՐԳԵՐ ԱՐՉԱՆԱԳՐՈՂ ԿԱՅՔԵՐ




«Նէփսթըր»ի ([www.napster.com](http://www.napster.com)) դադարեցումով, «այօրինի» կերպով համացանցէն «էմ. ֆի. 3» ֆայլերու արձանագրութեան երեւոյթը վերջ չգտաւ: Յաւանաբար նորանոր կայքեր, որոնք օգտագործելով «Նէփսթըր»ի աշխատելաճիւղը եւ օգտուելով անոր սխալներէն՝ տրամադրեցին ֆայլերու արձանագրութեան միեւնոյն կարելիութիւնները եւ աւելին:

Ստորեւ կը ներկայացնենք այդ կայքերուն կարելորդայինները -

- [www.audiogalaxy.com](http://www.audiogalaxy.com) - «Օտիոկալաքսի» կայքին մէջ տեղադրուած ֆայլերու փնտնողի յատուկ բաժինին օգտագործումով այցելուներ կրնան գտնել իրենց փափաքած երգը: Ֆայլերը արձանագրուած համար հարկ է նախ ունենալ «satellite» ծրագիրը, որ կարելի է արձանագրել նոյն այս կայքէջէն:
- [www.musiccity.com](http://www.musiccity.com) հասցեով կայքէջն արձանագրելով «մորֆէյըս» անունով ծրագիրը՝ նոյնպէս կարելի է այլ համակարգիչներէ ֆայլեր արձանագրել: Ի տարբերութիւն Kazaа ([www.kazaa.com](http://www.kazaa.com)) եւ Grokster ([www.grokster.com](http://www.grokster.com)) ծրագիրներուն՝ «Մորֆէյըր» աւելի ապահով գրութիւն մըն է:
- [www.winmx.com](http://www.winmx.com). «բէյլըր»ի միջոցով համացանցի հասոցութիւն ունեցողներ յաճախ կր գտնուան, թէ ֆայլերու արձանագրութեան գրութիւններ չեն գործեր իրենց համակարգիչին վրայ: Winmx ծրագիրը կը կազմէ բացառութիւններէն մէկը: Winmx նաեւ կարելիութիւն կու տայ ընդհատուած արձանագրութիւններ հետագային շարունակելու:
- [www.rootrode.org](http://www.rootrode.org)
- «Իւլթիտո» ֆայլերու փոխանակումի գրութեան օգտագործումով կարելի է արձանագրել բազմա-տասնեակ երաժշտական խումբերու «լայվ» համերգները:
- Ֆայլերու փոխանակման այլ կայքեր են՝
  - <http://gnucleus.sourceforge.net>
  - [www.bigredh.com/hotline](http://www.bigredh.com/hotline)
  - [www.mirc.com](http://www.mirc.com)
  - [www.madster.com](http://www.madster.com)

## ՀԱՅ ԴԱՏ ԵՒ ՀԱՍՏԱՆՑ ՍԱՆ ՖՐԱՆՍԻՍԿՈՅԻ ՀԱՅ ԴԱՏԻ ԶԱՆԶՆԱԽՈՒՄԵՐԻՆ ԿԱՅՔԸ



Սան Ֆրանսիսքոյի Հայ Դատի Յանձնախումբին գործունէութեան մասին տեղեկութիւններ ստանալու համար կարելի է այցելել յանձնախումբին պաշտօնական կայքը՝ [www.ancsf.org](http://www.ancsf.org):

Կայքը կ'ընդգրկէ Հայկական Յեղասպանութեան, Հայ Դատի Յանձնախումբերուն եւ մամուլ հաղորդագրութիւններուն յատկացուած բաժիններ:

Մեծ շահեկանութիւն կը ներկայացնէ «DOs and DONTs when Speaking out» խորագրեալ բաժինը, որ պետական անձնաւորութիւններու կամ մամուլին ուղղակուած պահանջատրական նամակներ գրելուց ցուցմունքներ կը կատարէ եւ կը ներկայացնէ նամակներու նմուշներ:

## ԻՍՐԱԵԼԸ ԶԱՌՆԻՒ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ՝ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՈՒՐԱՑՈՒՄԻՆ ՄԱՍԻՆ

Ընկերային հարցերու ուսումնասիրութեան նուիրուած «Ալտիա» պարբերութիւնը մէջ լոյս ընծայուած է [www.ideajournal.com](http://www.ideajournal.com) հասցեով կայքին մէջ տեղադրուած Իսրայէլ Չառնիի մէջ ուսումնասիրութիւնը լուսարձակի տակ կ'աւանջ Յեղասպանութիւններու ուրացման հոգեբանութիւնը:

Չառնիի շահեկան այս ուսումնասիրութիւնը, որ կ'անդրադառնայ Հայկական Յեղասպանութեան եւ Հրէական Ողջակիզումը ուրացողներու հոգեբանութեան՝ կատարելով բաղադատականներ եւ ընդգծելով ուրացումի հոգեբանութեան բաղադատ մասերը: Հանրայայտ հոգեբան-պատմաբանը նաեւ կը վերլուծէ ուրացումի տարբեր դրոպապատճառները:

Չառնիի ուսումնասիրութիւնը կարելի է կարգաւ այցելելով հետեւեալ հասցէին՝ [www.ideajournal.com/charny-denials.html](http://www.ideajournal.com/charny-denials.html)

Ուսումնասիրութեան հայերէն թարգմանութիւնը տրուած է «Ազդակ»ի Ապրիլ 24-ի բացառիկ մէջ:

## ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԾԱՆԿԱՐՆԵՐ



"IT AIN'T POLITE TO INTERRUPT!" - (SYKES) Evening Public Ledger (Philadelphia), June, 1922

ուսումնասիրութեան կեդրոնի <http://chgs.hisped.com> կայքին մէջ յատուկ բաժին մը յատկացուած է Օսմանեան կայսրութեան, իթի-հատակային երրորդ եւ Հայկական Յեղասպանութեան մասին շահեկան այլ նիւթեր, որոնց կարգին՝

- Տոքթ. Լու Անն Մաթիսեանի «Միւլտիմիալ թերթերու լրատուութիւնները Հայկական Յեղասպանութեան մասին, 1915-1922»:
- Հայկական Յեղասպանութեան վերաբարձ իրանում ֆայլուցեանի (1896-1975) վկայութիւնները:
- «Տը Տէյլի ֆեմիսկ-րաֆ» թերթէն յօդուած մը՝ Հայկական Յեղասպանութեան երկու վերապրողներու մասին:

«ԱՉԳԱԿ»Ի ՄԵՉ ԾԱՆՈՒՑՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազդակ»ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցնեն հրատարակման թուականէն առնուազ օր մը առաջ, Մինչեւ ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԻ ԺԱՄԱՆԱԿԻ 5:00:

ՄԱՀԱՉԳԱԿԵՐԸ բացառութիւնն է: Մահազ կ'ընդունուի փնջին ու զիշեր, այնքան ատեն որ զայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

Ողջակիզումի եւ ցեղասպանութիւններու մուկի մէջ: Հաւաքածոն, որ կը

բաղկանայ 26 գծանկարներէ, պատրաստուած է Ճոն Ահմարանեանի կողմէ:

Գծանկարներուն կողքին, կայքին «Histories, narratives, Documents» բաժինին մէջ ներկայացուած են նաեւ Հայկական Յեղասպանութեան մասին շահեկան այլ նիւթեր, որոնց կարգին՝

- Տոքթ. Լու Անն Մաթիսեանի «Միւլտիմիալ թերթերու լրատուութիւնները Հայկական Յեղասպանութեան մասին, 1915-1922»:
- Հայկական Յեղասպանութեան վերաբարձ իրանում ֆայլուցեանի (1896-1975) վկայութիւնները:
- «Տը Տէյլի ֆեմիսկ-րաֆ» թերթէն յօդուած մը՝ Հայկական Յեղասպանութեան երկու վերապրողներու մասին:

## Պատրաստեց՝ Խ. ՍՈՒՐՍԵԱՆ

ՀԱՅ ԱՌԱՔԵԼ ԿԱՆԵՂԵՑԱՍԻՐԱՅ ԵՂԱՅՐԱԿՑՈՒԹԻՒՆ, ՀՐԱԲԵՐ

Պիտի պատգամ՝ Ամերիկաբնակ հոգեւունջ քերթողագիր՝ ԺԱԳ Ս. ՅԱԿՈՒԵԱՆ

- Ժամը 4:00-ին պատգամ ընդհանուրին
- Ժամը 5:30-ին գրոյց ընդհանուրին

Տեղի կ'ունենայ Կիրակի, 28 Ապրիլ 2002, կէսօրէ ետք, Հայ Առաքելական Եկեղեցասիրաց Եղբայրակցութեան աղօթատեղիին մէջ:

ԱԶԳԱՅԻՆ ԵՂՈՇԵ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՔՈՒԼԵՆ ՏԻԿՆԱՆՑ ԶԱՆԶՆԱԽՈՒՄ

Համբարձման եւ Մայրերու Օրուան զոյգ առիթներով

ԴԱՇՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

- Այցելութիւն՝ Ռաֆայի եւ Հարսիսի սրբատեղիները
- Ճաշ՝ «Ղապաթ ալ Ուատի» ճաշարան

Սեկունդ՝ առաւօտեան ժամը 8:00-ին վարձարանէն: Վերադարձ՝ ժամը 5:00-էն 6:00-ի շուրջ վարձարան:

- Սակ՝ 25,000 Լ. Ո.
- ՅՆ 12 տարեկան փոքրերուն համար՝ 15,000 Լ. Ո.

[www.hamazkayin.com](http://www.hamazkayin.com)

# Մանկապատանեկան

## ԱՌԱՍՊԵԼԱԿԱՆ ԿՂԶԻ ՄԸ՝ ԱԹԼԱՆԹԻՍԸ

Հագարաուր գիրքեր գրուած են այս կղզիին մասին: Անոր անունը կը գրգռէ մասնագետներուն երեւակայութիւնը: Ի՞նչ են Աթլանթիսի գաղտնիքները:

Երեւակայէ հսկայական կղզի մը, ուր կ'ապրին չաստուածի մը՝ Փոսէյտոնի, եւ մարդէակի մը՝ Քլիթոնի զաւակները: Ան աւելի ընդարձակ է, քան Ասիան եւ Լիպիան միասնաբար, եւ կը գտնուի Ատլանտեանի կեղծոնը: Անոր բերրի դաշտերը կու տան առատ եւ տեսակաւոր ուտելիքներ, որոնք կը բաւարարեն կղզիին բնակիչները, ինչպէս նաեւ՝ բազմաթիւ անասունները, ինչպէս՝ փիղերը: Տաք ջուրի եւ պղծ ջուրի մէկ կական աղբիւրներ ջուր



Ո՞ր կը գտնուի Աթլանթիսը

կը հայթայթեն հանրային բաղնիքներուն եւ դաշտերը կը ջրեն: Քաղաքէն կ'անցնին բազմաթիւ ջրանցքներ, որոնք կարելի չի ունենար կու տան նաեւ ջուրը շրջապատէն: Քաղաքը հասնելու:

Կղզին կը ղեկավարեն իմաստուն եւ լաւ մարդիկ: Ան շատ հարուստ կղզի մըն է: Անոր տաճարները ծածկուած են ոսկիով եւ արծաթով...

### ԳԱՂՏՆԻ ՔԱՂԱՔ ՄԸ

Այս քաղաքը գոյութիւն ունեցած է, կը հաստատէ փիլիսոփայ Պլատոն, Ք. Ա. 4րդ դարուն: Ան կ'ըսէ, թէ Աթլանթիս կոչուած այս կղզին կորսուած եւ ընկղմած է ջուրերու մէջ, հսկայական ջրհեղեղի մը պատճառով:

Երբ Պլատոն այս նախագաղտնիքները կը գրէր, ան չէր երեւակայէր, թէ կը ստեղծէր աշխարհի ամէնէն անսովոր առասպելներէն մէկը: Գաղտնի Աթլանթիսին պատմութիւնը ծնունդ պիտի տայ աւելի քան 25 հազար հետաքրքրական գիրքերու եւ շարժապատկերներու...

## ՓԻՂԵՐՈՒՆ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆԸ


Մեր փիղերը կրնան ձայնէն ճանչնալ որեւէ մէկ փիղ: Անոնք կրնան յիշել, եթէ ան ընկեր մըն է կամ ոչ եւ այս ձեւով իրենց հօտին փոխանցել, թէ ան կրնայ մօտենալ, կամ պէ՞տք է վախճալ վտանգի մը ներկայութենէն:



Որքան փիղերը ծերանան, այնքան անոնց յիշողութիւնը կը հարստանայ: Անոնց «ձայներու ցանկը» մինչեւ 150 «անուններ» կը պարունակէ...

### ՀԱՅԵԼԻՆ ՄԸ


Մարդ արարածէն եւ մեծ կապիկներէն ետք, դիփինը երրորդ կենդանի էակն է, որ կրնայ հայելին մէջ իր պատկերին ներկայութեան անդրադառնալ: Ան



Երկար ժամանակ կ'անցընէ իր պատկերին նայելով՝ իր մարմնին վրայ մեծան թափուելէն ետք: Սակայն ան անտարբեր է նման բիծերու ներկայութեամբ, երբ անոնք կը գտնուին ուրիշ դիփիններու վրայ: Ասիկա կը նշանակէ, թէ ան կը հասկնայ, թէ խնդրոյ առարկան ինքն է եւ ոչ իր ընկերներէն մէկը, զոր կը տեսնէ հայելին մէջ:

Այս սխալը կ'ընէ, օրինակի համար փիղը:

## ՉԱՅՆ ՄԸ ԿԸ ՀՍԵՄ...



- Երբ հաւաքուած կ'ըլլաք մեծ սեղանի մը շուրջ, առիթէն օգտուեցէք ձայներով խաղալու համար:
- Գոցեցէք անձի մը աչքերը:
- Ուրիշ խաղցող մը ձայն մը կը հանէ (իւր գաւաթով, դանակ եւ պատառաքաղներով, եւ այլն):
- Աչքերը գոց անձը պէտք է կուսէ, թէ ինչի՞ ձայն է: Կը կարծե՞ս, որ դիւրին է...
- Կրնաք նաեւ խաղը դժուարացնել: Ձայներուն թիւը սահմանափակեցէք եւ թոյլ մի՛ տաք, որ աչքերը փակ անձը գլուխը դարձնէ...
- Ան յաջողեցա՞ւ կուսել, թէ ինչի՞ ձայն էր եւ ուր կէ՞ կու գար: Ապրի՛ս: Գլխակապը կ'անցընէ իր քովի խաղցողին:

## ՓՈՐՉԱԾ ԵՍ



- Կով մը գծել մատիտը բերանովդ բռնելով:
- Կօշիկներդ կապել մէկ ձեռքով:
- Երկու հոգիով բայել ձեր ոտքերը նոյն մուճակներուն մէջ դրած (անշուշտ նախընտրելի է, որ մուճակները չափահասի մը չափով ըլլան):
- Թիթեանիկի ձեռով հանգոյց մը բնել ոտքերով:


## Ժ Ա Մ Ա Ն Յ




Կրնա՞ս գտնել 2 պատկերներուն միջեւ գոյութիւն ունեցող 6 տարբերութիւնները:



Կրնա՞ս գտնել այն պատկերը, որ տարբեր է միւսներէն:



Կրնա՞ս գտնել վերի պատկերին համապատասխանող շուրջ:



Քանի՞ մարդ կը տեսնես պատկերին մէջ:

Պատրաստեց՝ ՇՈՂԻԿ ՏԵՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ

## ՊՂԱՏՈՆԻՆ ՊԱՐԱԳԱՆ

Մասնագէտներու համաձայն, Աթլանթիսը բխած է Պլատոնի երեւակայութենէն: Ան ուզած է իր ժամանակի մարդոց, Աթենքի բնակիչներուն դաս մը սորվեցնել: Իր պատմութեան մէջ ան կը ներկայացնէ Աթլանթիսի կործանումը, իբրեւ աստուածային պատիժ: Երկար ժամանակ իբրեւ արդար եւ լաւ մարդիկ ապրել է ետք, Աթլանթիսի բնակիչները վերածուած են անգութ և այլասերած ժողովուրդի մը: Ջեւ որոշած է զանոնք պատժել՝ աշխարհի երեսէն ջնջելով: Այս պատմութեան ընդմէջէն Պլատոն փորձած է Աթենքի բնակիչները համոզել, որ ճիշդ ճամբու մէջ մնան:



Սակայն ինչո՞ւ մարդիկ այսքան մեծ հետաքրքրութիւն կը ցուցաբերեն այս կղզիին նկատմամբ: Պատասխանը պարզ է: Ո՞վ չ'երագեր ունենալ խելացի, հարուստ եւ նշանաւոր նախահայրեր:

**MESROBIAN TECHNICAL COLLEGE**  
 The Pioneer In Technical Education  
 LANGUAGES & COMPUTER COURSES (4th Session)  
 MAKE UP & BUSINESS STUDIES (Spring Session)  
 Thursday, 2nd of May 2002  
 Arax street, Bourj Hammoud  
 Tel: (01) 260504 - Fax: (01) 262955  
 e-mail: mesobca@dm.net.lb  
 Web Site: www.mesrobian.com

**PHOTO RAFFI**  
 Լուսանկարչական արագ, ապահով եւ մատչելի սպասարկութիւն բոլոր առիթներու համար  
 ❖ DIGITAL ԵԿԱՐԱՇԱՆՈՒՄ ԵՒ ՎԻՏՕ - ԵՐԻՉ  
 ❖ ԲԱՐՁՐՈՐԱԿ ԵԿԱՐԱՇԱՆՈՒՄՆԵՐ  
 Միակ հասցէ.- Պոլորձ Համուտ, Լ. եւ Ս. Յակոբեան քաղ, 49/161: Հեռ. 03 / 703181  
 E-mail: photoraffi@hotmail.com

**ՈՒՆՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ - ՇՐՋԱՊՏՈՅՏՆԵՐ**  
 ● 53 Մայիս Մար Զրիս, Թարրու-Լարաքիա, Շախաձաշ եւ ճաշ 185  
 ● Հայաստան համաձայնական Բ. ժողով 24 31 Մայիս 4755  
 ● 8-29 Յուլիա Հայաստան, Սեւան, Արզնի 21 օր պտոյտ-Ներով, Վիգա, Կուրք, օդամարտու 399, 455, 555, 7809  
 ● Ապրիլ 2210 սիւնալ ամէն ատու եւ իրիւում մեր Գրասենեակի առջեւն ղեպի Հայէպ, Դաճակոս, Լարաքիա, Շոր օրորարներով, միայն 65, օտուած T. V./ Tel./ W. C.  
 ԱճճԵԱՆ Թուրք 01/261177 03 233978

# ԱՆՑԵԱԼԻ ՀԵՏՔԵՐՈՒՆ ՎՐԱՅ

Շարունակում 4րդ էջին

մէկը հայ բառը բնաւ չէ լսած, իսկ միւսը լսած է, որ «էրմանիստան» երկիրը մը կայ, բայց չի գիտեր, թէ ո՞ր է այդ երկիրը: Մենք նստած ենք Ազրայէջման պողոտային սրճարաններէն մէկուն մէջ. «Մարաշ ծնած թուրք նշանաւոր բանաստեղծի մը անունով կը կոչուէր այս գեղեցիկ պողոտան, կը պատմէ երիտասարդ իսապիրը, բայց 1993ին քաղաքագետները, չես գիտեր ինչո՞ւ, փոխեց պողոտային անունը եւ բանաստեղծն ալ մոռցուեցաւ»:

Մարաշը կէսօրին կարծես մէկէն կ'արթնանայ իր թմբորէն եւ կը վերածուի խոնորած, աղմուկոտ քաղաքի: Մինչ շուկայի հասուն պտուղներուն բուրմունքը եւ ձուկի գարշահոտութիւնը «կը վիճաբանին» իրարու հետ, մենք կ'ուղղուինք դէպի Այնթապ:

Մոսկու գիշերուան մէջ մենք քանի մը կիսաւեր հայկական կառոյցներ կը գտնենք: Մարաշի գրեթէ բոլոր մզկիթները կարկտնուած են յունական եւ հայկական եկեղեցիներու վրայ: Քաղաքին մէջ տեղը, ընդհանրապէս կը գտնուի պատմական բերդը: Մարաշի մէջ 1915ին կային հայկական 11 եկեղեցիներ, տասնեակ մը վարժարաններ, կը հրատարակուէին «Յշմարտութիւն» եւ «Կոչնակ» պարբերականները:

Այնթապի հիւսիսային մուտքը կը սկսի հսկայ գերեզմանոցով: 1915ին Այնթապի նուրբ ստեղծագործութիւնը հայկական արուեստի փառքերէն մէկն էր, որ կ'արտահանուէր եւրոպական եւ ամերիկեան շուկաները: Այնթապը ունէր 6 հայկական եկեղեցիներ, 17 վարժարաններ, բարեգործական հաստատութիւններ:

Առտու պանդոկին ծառայողներէն մէկը՝ Մոհամմէտ, կը մտենայ մեզի եւ հասցէ մը կուտայ ըսելով, թէ հոն հայկական շինութիւն մը կայ: Մեր գիշերային բարեկամները քառորդ ժամէն մեզ կը հասցնեն նշուած վայրը: Մեր առջեւ հսկայ, եռաշարկ, ճերմակ քարէ շէնք մըն է, որ նորագոյնութեան մէջ է: Ո՛ր կը գտնուինք մենք... Մարաշի երբեմ-

նի փառապանծ ճեմարանին, թէ որբանոցին առջեւ: Շէնքին քարերը լուռ են...

Մարաշի երբեմնի փառապանծ ճեմարանին, թէ որբանոցին առջեւ: Շէնքին քարերը լուռ են...

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Նախագահութեամբ՝  
ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄԵՊՍ. ԽԱՉԻՐԵԱՆԻ  
(Առաջնորդ Լիբանանի Հայոց Թեմի)  
Կազմակերպութեամբ՝  
Ս. ԱՍՏՈՒԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ  
ԹԱՂԱՎԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ  
ԱԶԳԱՅԻՆ ԱՐԳԱՐԵԱՆ ՎԱՐՓԱՐԱՆԻ  
ՀՈԳԱՐԱՉՈՒԹԵԱՆ  
Ի յիշատակ՝  
Ս. Աստուածածին Եկեղեցւոյ եւ Ազգային  
Արքայեան Վարժարանի Գնջեցեալ  
Գիմնադիրներու, ԱՍԱՆԱԹԻ  
բարերարներու եւ գործողներու,  
հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 28 Ապրիլ 2002, Նոր Ատանայի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ՍԱՐԳԻՍ ԱԶՆԱՌՈՒՐԵԱԼԻ Գահատակութեան ԺԵ. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 28 Ապրիլ 2002, Նոր Ատանայի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԶԵՐՄԻԼԵ ԹՆՃՈՒԿԵԱԼԻ մահուան քառասունցի առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 28 Ապրիլ 2002, ԱԳթիլիայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԳԱՆՆԻԿ ԾՐՂԸԵԱԼԻ մահուան Բ. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 28 Ապրիլ 2002, ԱԳթիլիայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՅՈՎՀԱՆՆԵՍ (ԱՊՈՒ ՍԻՄՈՆ) ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱԼԻ մահուան Ա. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 28 Ապրիլ 2002, Տըպայայի Մար Ժորիս Եկեղեցւոյ մէջ (ջորի ընկերութեան կից), առաւօտեան ժամը 10:00ին:

ՆԵՐՍԵՍ ԶԱՐԴԱՐԵԱԼԻ մահուան քառասունցի առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 28 Ապրիլ 2002, Տըպայայի Մար Ժորիս Եկեղեցւոյ մէջ (ջորի ընկերութեան կից), առաւօտեան ժամը 10:00ին:

ՀՐԱՅՐ ԳԱՍԱՊԵԱԼԻ մահուան Ա. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 28 Ապրիլ 2002, Նոր Մարաշի Ս. Բառասնից Մանկանց Եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԺԱԼԵԹ ՄԱՐՏԻՐՈՍԵԱԼԻ մահուան քառասունցի առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 28 Ապրիլ 2002, ԱԳթիլիայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՊՕՐՈՍ ՆԱԶԱՐԵԱԼԻ մահուան 21րդ տարելիցին, ՄԱՐԻ ՆԱԶԱՐԵԱԼԻ մահուան 19րդ տարելիցին եւ ՊԵԹԻ ՆԱԶԱՐԵԱԼԻ մահուան 20րդ տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 28 Ապրիլ 2002, Նոր Ատանայի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԹԱԳՈՒԻԻ ԴԱԻԹԵԱԼԻ մահուան քառասունցի առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 28 Ապրիլ 2002, Ս. Նշան Մայր Եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

## ՍԱԿԱՐԱՆ

Պէշրոփ սակարանին մէջ օտար դրամ- հիշներու փակման սակագները հետեւեալներն են:

Սուրիական թղթակի	31,50 - 33,50 լ.ն.
Իրաքեան տինար	50,00 - 51,00 լ.ն.
Պահլէյեան տինար	3990,00 - 4010,00 լ.ն.
Քուէթեան տինար	4922,42 - 4926,42 լ.ն.
Յորդանանեան տինար	4896,42 - 4950,24 լ.ն.
Ս. Մ. Էմիրութեան տինար	408,43 - 412,42 լ.ն.
Սեուսական ուիալ	399,90 - 403,99 լ.ն.
Օմանեան ուիալ	3900,00 - 3930,00 լ.ն.
Բարաբեան ուիալ	412,15 - 416,15 լ.ն.
Եգիպտական կինէ	323,72 - 327,72 լ.ն.
Անգլիական սթերլին	2187,70 - 2191,11 լ.ն.
Չուիցերիական ֆրանք	918,35 - 922,52 լ.ն.
Թրքական լիրա	3,62 - 3,64 լ.ն.
Կիպրական փաուստ	2392,25 - 2396,35 լ.ն.
Ճափոնական հապար եէս	11,60 - 11,64 լ.ն.
Օմանեան մէկ ոսկի	2450 - 2451 լ.ն.
Մեքսիկական փէսո	1501,00 - 1514,00 լ.ն.
Քանադական տոլար	958,40 - 962,85 լ.ն.
Սուտրալիական տոլար	818,85 - 822,70 լ.ն.
Եւրո	1349,95 - 1353,16 լ.ն.

● ՈՍԿԻ

Անգլիական մէկ ոսկի	105,000 - 115,000 լ.ն.
Իրանեան մէկ ոսկի	91,000 - 101,000 լ.ն.
Օմանեան մէկ ոսկի	80,000 - 90,000 լ.ն.
Մեքսիկական փէսո	474,000 - 498,000 լ.ն.
Մէկ քիլոկրամ	
ձոյ ոսկի	12,300,000 - 12,800,000 լ.ն.
Մէկ օսս ոսկի	303,68 - 307,72 S
Մէկ օսս արծաթ	4,58 - 4,62 S

● ՍՈՒԼԻՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ ԳԻՆԻ Ա. ճշդում ԳԻՆԻ Բ. ճշդում

Ա. կարգի	4 3/8	4 3/8
Բ. կարգի	4 7/8	4 7/8
բաժնետիր		

## ԼՈՆՏՈՆԻ ՍԻՋԱԶԳԱՅԻՆ ՍԱԿԱՐԱՆ

Լոնտոնի սակարանին մէջ, դրամանշիններու փոխանակման սակը հետեւեալն էր երեկ կէսօրին.

Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը.	
Եւրո	0.8985
Ֆրանսական ֆրանք	7.4287
Քանադական տոլար	1.5621
Գերմանական մարք	2.215
Հոլանդական ֆլորէն	2.4957
Չուիցերիական ֆրանք	1.6284
Պելիքական ֆրանք	45.685
Իտալական լիր	2192.83
Ճափոնական եէն	128.01
Շուեդական քրոն	10.2485
Նորվեգիական քրոն	8.4282
Դանիական քրոն	8.2706
Մէկ սթերլին	1.4544

## ☆ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ☆

☆ **ԽՈՅ** (21 Մարտին 20 Ապրիլ)  
Կը մտահոգուիք տնտեսական ձեռք վիճակով, բայց ինչո՞ւ համար չէք մտածեր այն ձեռքերը մասին, որոնք կրնան ձեզի շահ բերել եւ նպաստել նոր աշխատանք մը կատարելու:

☆ **ՅՈՒԼ** (21 Ապրիլին 21 Մայիս)  
Կը փափաքիք ձեր հարազատներով շրջապատուած խաղաղ օր մը անցընել. անոնք պիտի ընդառաջեն ձեր բաղձանքին եւ մխանաբար օրը պիտի անցնի զուարթ:

☆ **ԵՐԿՈՒՈՐԵԱԿ** (22 Մայիսին 21 Յունիս)  
Կը մտածեք փոքր, անընթաց հարցերու մասին, որոնք իրապէս ոչինչ են: Ձեր իմաստութիւնը ի գործ դրէք եւ ջանացէք պարզացնել հարցերը:

☆ **ԿԵՑԳԵՏԻՆ** (22 Յունիսին 23 Յունիս)  
Ձեր աշխատանքի կամ տեղափոխութեան պահերուն զգուշ եղէք: Նաեւ մարգական փորձերու պահերուն եղէք ուշադիր, որպէսզի արկած մը չպատահի:

☆ **ԱՌԻԻԾ** (24 Յունիսին 23 Օգոստոս)  
Ձեր մերձակներուն հետ ձեր կապը այնքան ալ սերտ չէ: Ձեզմէ ոեւէ մէկը սիրտ չունի զրոյցի նստելու այսօր: Սրափեցէք ձեր բմբիրէն:

☆ **ԿՈՅՍ** (24 Օգոստոսին 23 Սեպտեմբեր)  
Հանդիպումի մը ընթացքին հանգիստ պիտի չզգար ձեր շրջապատին հետ: Բայց դուք յայտնի պիտի չընէք ձեր զգոգնութիւնը եւ պիտի շարունակ մթնոլորտին:

☆ **ԿՇԻՈՒԲ** (24 Սեպտեմբերին 23 Հոկտեմբեր)  
Ձեր ուզածը պիտի չկարենաք կատարել, այդ պատճառով ձեր տրամադրութիւնը ընդ մը պիտի խանգարուի: Բայց պէտք է համբերէք թիչ մը եւս. խելքի եկէք եւ անխառն հարցերու մասին ձեր օրը մի խանգարէք:

☆ **ԿԱՐԻՃ** (24 Հոկտեմբերին 23 Նոյեմբեր)  
Գուր ձեզի անիմաստ հարցումներ կ'ուղղէք: Եթէ կ'ուզէք որ օրը անցնի խաղաղ, մէկ կողմ դրէք մտմտութեան եւ գուարեացէք ձեր սիրելիներուն հետ:

☆ **ԱՂԵՂՆԱՌՈՐ** (24 Նոյեմբերին 21 Դեկտեմբեր)  
Այսօր թիչ մը խանգարուած էք ֆիզիքապէս: Մոռցած էք անցնել վիթմանը, որուն պէտք ունիք: Առանց ցանկալի հոգ տարէք ձեր առողջութեան:

☆ **ԱՅԾԵՂՋԻՒՐ** (22 Դեկտեմբերին 20 Յունուար)  
Օրագիր մը պիտի յետաձգուի. այսօր ժամանակը յարմար չէ նման հարցեր կարգադրելու: Քիչ մը եւս համբերեցէք, որովհետեւ ձեր ծրագրին իրագործումը պարզապէս ուշացած է իրելիմացութեամբ:

☆ **ՄՈՎԱՆՈՅՇ** (21 Յունուարին 19 Փետրուար)  
Շատ հարցումներ կ'ուղղէք դուք ձեզի ձեր պագային մասին: Ափսոս, որ դուք տեղ չյայտարարուիք օր մը կը խանգարէք անիմաստ հարցեր ստեղծելով:

☆ **ՁՈՒԿ** (20 Փետրուարին 20 Մարտ)  
Օրը օրինուած է իրարմ մօտիկ երկուստեան համար: Եթէ առանձին կ'ապրէք, հանելի կանգնուի մը յանկարծակի պիտի չեքմացնէ ձեր տրամադրութիւնը: Ամէն ինչ լաւ պիտի ընթանայ այսօր:

**ՕՐԱՏԵՏՐ**

**Panasonic**

**ՇԵՆԱՏԵՍԻԼ**

Թ. Է. Լ. 10:00. Սապաօ 13:00. Մարոյ

14:00. Լուրնիս 14:30. Լուրնիս 15:00. Ֆիլմաշար 17:30. Կենդանի

18:30. Մանկական 19:30. Լուրնիս 20:00. Թոթով ռիթմ 21:00. Մեխիս 20:00. Զէմէլ 23:00. Արաք. յայտագիր

Լ. Մ. Վ. 7:15. Քիֆիս 7:30. Թէլէմաթիս

08:30. Միտի սթիւտիո 09:30. Վիտէօ կալ 10:30. Քի թի 12:45. Էն. Պի. Էյ. էքըըն 13:30. Էմ. Թի. Վի.

14:00. Ժորիս Զրանս 2 14:30. Սի. Էն. Էն. ի յուրեր 15:00. Աղանի Աղանի 16:00. Միտի սթիւտիո 18:00. @ Էմ. Թի. Վի. 19:00. Պրէքիսիս ար արձըշքի քոտ 20:00. Արաքեան յուրեր 20:30. Հայաս 22:45. Էմ. Թի. Վի.

23:00. Ամերիկ. ժապաւէն

Լ. Մ. Ս. 7:00. Սի. Էն. Էն. ի յուրեր 7:30. Կենդանի գծանկար

09:00. Մանկաներու յատուկ քառորդ 10:30. Նախարար սահուն 14:00. Անտո Տոմիտի 15:00. Լուրնիս 15:15. Քիլի 16:00. Չէմֆրիս լիլ 17:00. Քիլի Սայֆրա 18:55. Հէյք սաք 19:00. Արաք. ֆիլմաշար 20:00. Արաքեան յուրեր 20:35. Սիլայ ի պէյթ 21:35. Կրօնական երաժշտութիւն 00:00. Պատարագ

13:00. Ֆիլէ Ինֆօ 13:05. Մարզական - Ֆորմիլյա 1

15:00. Լուրնիս 15:30. Նրս տաքիքա 16:30. Ֆորպոլ 18:30. Մարզական 19:00. Այ ֆախ 20:00. Արաքեան յուրեր 20:30. Առուսւմ մութահարիքա 20:35. Լէյլէր Սինս 22:30. Միլիթրանս 23:30. Այ ֆախ

Է. Մ. Է. 15:00. Լուրնիս 16:00. Այս մաշարէք այ քարն 17:00. Տնտեսական 17:30. Սիւնեմ/35mm 18:00. Արաք. յայտագիր 18:45. Սիսիս 19:00. Լուրնիս 20:00. Լիքս սիսիս 20:30. Շարժապատկեր 21:30. Սիսիս 22:00. Այ մասսիլեա 23:00. Թահիքի այ եսուն 23:30. Մարզական յուրեր 00:00. Լուրնիս

Է. Մ. Է. 7:30. Լիքսար 8:00. Թոմ Էնտ ձերի ժապաւէն

08:30. Մանկական ժապաւէն

10:00. Լուրնիս 13:30. Անրիական ֆիլմաշար

14:30. Լուրնիս 15:00. Մանկական յայտագիր

15:30. Կենդանի գծանկար 16:30. Սոկիլի 17:00. Քիլի թիլի 19:00. Վիտէօ ֆէշըն 19:30. Լուրնիս 20:30. Պէք սէլլըր 21:30. Տեղական յայտագիր 23:00. Ամերիկեան ժապաւէն

Լ. Մ. Ս. Ս. 7:00. Լուրնիս 9:00. Այս Այ Սապաօ

07:00. Հայտարար 08:00. Հայարի մէկ 08:25. Պենէֆիս. Յովիկ Յովիկեանի ծէպ 09:00. Հեռուստատեսիայ «Սիտի կայան»

10:00. Մայր թատրոն - 80. փաստագրական ֆիլմ «Վարդան Աճեմեան»

10:30. Անցեալը ներկան է 11:00. Փառասոս «Մուտք 21րդ դար»

11:20. Մեր յեղուն մեր հայրենիքն է 11:30. Պատմութիւններ որտորութեան եւ ձկնորսութեան մասին 12:00. Երգում է Սուսաննա Սիրադեղեանը

13:25. Ֆիլմ - բալետ «Իմ Պալլոման»

13:40. Հեռուստաներկայացում. Մուշեղ Գալշոյեան «Մամբրէ արքան»

15:00. Հայտարար 15:20. Մուշեղեանի «Պատկերասրահ պատմութիւններ Աստուածաշնչից»

15:50. Ալիքո - TV 16:10. Բարի ախորժակ 16:30. Երեկոյեան Երեւան 16:40. Խորակ յուսու 16:50. Երջարար 17:20. Կանանց հեռուստատեսիայ

18:35. Տուն - տունիկ 19:00. Հայտարար 19:50. Չիլիս 20:25. «Սիլիս» 22:00. Հայտարար 22:20. Երեկոյեան Երեւան 22:30. Խորակ յուսու 22:40. Հեռուստաներկայացում. Մուշեղ Գալշոյեան «Մամբրէ արքան»

22:50. Երեկոյեան Երեւան 23:55. Ֆիլմ - պալետ «Իմ Պալլոման»

01:10. «Բարեւ, ես եմ» 03:20. Մուշեղեանի «Պատկերասրահ պատմութիւններ Աստուածաշնչից»

03:45. Դանի, մի պատմութիւն պատմիր 04:00. Հեռուստատեսիայ «Պատմութիւն Ալիքո»

05:00. «Բարեւ, ես եմ» 06:50. Պատկերասրահ

## ԽԱՉԲԱՆ ԹԻԻ 5134

Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱՋԱՐԵԱՆ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										
11										

**ԸՈՐԻՉՈՆԱԿԱՆ**

- Ճաշի հիւր:
- Ճարակատեղի - Համբարձեան կերակուր:
- Չորաթուղ - Յիմար:
- Թաքուն պայթուցիկ - Հայկական ըմբշարար - Նոյն գիրքեր:
- Ստուերագիր, ուր:
- Կրկնուած տառեր - Թատերական հանգըրուան - Վախ:
- Ինք - Կանացի օտար - շարժապատկեր - 1982ի լուսագոյն ֆիլմը:
- Նաքարակիտ - Շաղկապ:
- Սկառու - Շոգոմոգ:
- Թրքահայ օրաթերթ - Հեռագիր:
- Իրերայաջորդ գիրքեր - Կարմիր:



**ՈՒՂԱՆԱՅԵՍ**

- Անասունի կողմ - Նախամարդ:
- Իրեան շրջագայութեան խոտովակ - Կարմրախիչ:
- Չանգակներու ձայն - Գուն:
- Կրկնական քաղաք - Կենդանական սեռ:
- Մորթային բիծ - Հաստ պարան:
- Անճարակ - Էգ թռչուն:
- Մասնիկ - Որոշուած գին:
- Ստացական անական - Աչառութիւն կամ գանազանութիւն:
- Խոպան վայրեր աճող բոյս - Ուրուական:
- Ներկելու գործարան:
- Տասը հազար Հիսու

# Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն



## ԱՇԽԱՐՀ



### ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ ԱՅՍՕՐ՝ 3.Մ.Ը.Մ. - ԱՆՈՒ ԱԼԵՅ

Լիբանանի ֆուտբոլի ֆեդերատիվի կողմից 23րդ հանգրուանի մրցումներում, այսօր՝ Շաբաթ, Պուրճ Համուտի Քաղաքային ֆուտբոլի շախմատային վրայ, Հ. Մ. Ը. Մ.ի ֆուտբոլի ներկայացուցչական խումբը կր հիւրընկալէ Ախա Ախի Ալեյը, որ կը գրաւէ ընդհանուր դասաւորման 9րդ դիրքը, երկու կէտի առաւելութիւն մը ունենալով 10րդ դիրքը գրաւող Ախի վրայ, որ այսօր ճակատագրական մրցում մը ունի կատարելիք իր մէջ մէկ դիրք վար գտնուող Հ. Մ. Մ.ի հետ: Այժմ, անոնց միջեւ կը գտնուի չորս կէտի տարբերութիւն մը: Ախի արձանագրելիք յաղթանակին պարագային, Հ. Մ. Մ.ի վիճակը պիտի ըլլայ շատ անելի գէշ եւ անհկա գրեթէ պիտի կորսնցնէ իր յոյսերը՝ Ա. դասակարգ մնալու:

Շաբթուան զագաթի ճակատումը տեղի պիտի ունենայ վաղը՝ Կիրակի, Թրիփոլի մէջ, ուր թատամուն Սուր պիտի ճակատի Սաժէսի դէմ: Այս վերջինը, որ կը գրաւէ պարագլուխի դիրքը, այժմ երկու կէտի առաւելութիւն մը ունի 2րդ դիրքը գրաւող Նըժմէի վրայ, որ պիտի մրցի Սաֆայի դէմ (5րդ):

Ստորեւ՝ 22րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը.

ԱՅՍՕՐ	ԺԱՄ	ԴԱՇՏ
Շ. Սահէյ - Ռասիկ	4:30ին	Մ. Աւան
Հ. Մ. Ը. Մ. - Ա. Ալեյ	4:30ին	Պ. Համուտ
Ախ - Հ. Մ. Մ.	4:45ին	Պէյրուս
ՎԱՂԸ		
Սաֆա - Նըժմէ	4:30ին	Մ. Աւան
Թատ. Սուր - Սաժէս	4:30ին	Թրիփոլի
Ա. Սայտա - Սայամ	4:30ին	Պէյրուս
Պըրճ - Անսար	4:30ին	Պ. Համուտ

### ԼԻԲԱՆԱՆԻ Դ. ԴԱՍԱԿԱՐԳԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

#### ՎԱՂԸ՝ 3. Մ. Ը. Մ. - ՈՒՄՅՏԷ ՇԸՂԻՄ

Լիբանանի ֆուտբոլի Դ. դասակարգի ֆեդերատիվի կողմից 2001-2002 եղանակին, վաղը՝ Կիրակի, 28 Մարտին, Հ. Մ. Ը. Մ. Պուրճ Համուտի կապը կը կատարէ իր առաջին մրցումը՝ Ուսիտէ Շըիմի դէմ: Մրցումը տեղի կ'ունենայ Պիսապուրի դաշտին վրայ, ժամը 4:30ին:

Հ. Մ. Ը. Մ. Պուրճ Համուտ, որ մաս կը կապմէ Ե. իմբակին, յաջորդ հանգրուան հասնելու համար պէտք է անպայման գրաւէ իր իմբակին պարագլուխի դիրքը, որպէսզի յոյս ունենայ Գ. դասակարգին տուն մը ապահովել: Իրաքանչիւր իմբակի պարագլուխի դիրքը գրաւողը ստանձնումը կ'անցնի յաջորդ հանգրուան:

Նշենք, թէ Հ. Մ. Ը. Մ. Պուրճ Համուտի մարզիչն է՝ Սամուէլ Պողոսեան:

Ստորեւ՝ Հ. Մ. Ը. Մ.ի կապը.

ԳԵՐԳԱՊԱՂՆԵՐ	ԺԱՄ	ԴԱՇՏ
Շաբ Պաքճեան		
Կարո Թորթիկեան		
ՅԵՏԱՍՊԱՂՆԵՐ		
Յարութ Ասատուրեան		
Ճորճ Ալթունեան		
Խաճկի Քէշիշեան		
Միսաք Պատիկեան		
Յակոբ Տեմիրճեան		
ՄԻՋԱՆՊԱՂՆԵՐ		
Անթո Տագուպեան		
Կարպիս Խըտըրեան		
Սեպուհ Պապիկեան		
Սազո Աւետիսեան		
Բաֆֆի Աւետիսեան		
Սեւակ Գալֆայեան		
Վիգէն Միսիսեան		
Գէորգ Փուշեան		
ՅԱՆԱՋՊԱՂՆԵՐ		
Սազո Գալայճեան		
Յարութ Ճանիքեան		
Մկո Օտապաշեան		
ՍՏՈՐԵՒ՝ Ա. հանգրուանին Հ. Մ. Ը. Մ. Պուրճ Համուտի կատարելիք մրցումներուն յայտագիրը.		
ԿԻՐԱԿԻ, 28 ԱՊՐԻԼ	ԺԱՄ	ԴԱՇՏ
Ուսի. Շըիմի - Հ. Մ. Ը. Մ.	4:30ին	Պիսապուրի
ԿԻՐԱԿԻ, 5 ՄԱՅ		
Մաքար - Հ. Մ. Ը. Մ.	2:00ին	Շեպիպէ
ԿԻՐԱԿԻ, 12 ՄԱՅ		
Իսթրիալ - Հ. Մ. Ը. Մ.	4:00ին	Ժունիէ
ԿԻՐԱԿԻ, 19 ՄԱՅ		
Հ. Մ. Ը. Մ. - Ա. Շուիթ	10:00ին	Պիսապուրի
ՇԱԲԱԹ, 25 ՄԱՅ		
Հ. Մ. Ը. Մ. - Ինտիֆահ	4:30ին	Քֆարշիմա

### Հ.Մ.Ը.Մ.Ի ՖՈՒԹՊՈԼԻ ՀԱՍԱԿԱՐԳԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Հ.Մ.Ը.Մ.ի համակիրներու յանձնախումբը Հ.Մ.Ը.Մ.ի ֆուտբոլի սիրահարները կը հրաւիրէ արտաք գրոյց - հանդիպումի մը՝ խումբին պատասխանատուներուն եւ կրտսեր խումբերու մարզիչներուն հետ:

Հանդիպումը տեղի կ'ունենայ Երեքշաբթի, 30 Ապրիլ երեկոյան ժամը 8:00ին, Ազգ. Լ. եւ Ս. Յակոբեան բուլճարի արահին մէջ, Պուրճ Համուտ:

● Բոլորիդ ներկայութիւնը խիստ փափաքելի է:

### ՖՐԱՆՍԱՅԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ ԱՅՍՕՐ՝ ՊՈՐՏՕ - ԼԻՈՆ ԳԱԳԱԹԻ ՃԱԿԱՏՈՒՄ

Ֆրանսայի ֆուտբոլի ֆեդերատիվի կողմից 33րդ եւ նախավերջին հանգրուանի մրցումներուն, պարագլուխի դիրքը գրաւող Լանս, որ պիտի հիւրընկալէ նախավերջին դիրքը գրաւող Կենկանը, յաղթանակէ այլընտրանք չունի, որովհետեւ պարտութեան մը պարագային անհկա կրնայ կորսնցնել պարագլուխի դիրքը, իր անմիջական մրցակիցին՝ Լիոնի (2րդ), որ միայն մէկ կէտով ետ կը մնայ անկէ:

Ստորեւ՝ այսօր տեղի ունենալիք մրցումներուն յայտագիրը (բոլոր մրցումներն ալ տեղի պիտի ունենան ժամը 21:00ին՝ Պէյրուսի ժամով):

Յարութ (10րդ) հիւրը պիտի ըլլայ վերջին դիրքը գրաւող Լորիանի, մինչ Փարիզ Սէն ժերմէն (4րդ) պիտի հիւրընկալէ Մետը (16րդ):

Մտորել՝ այսօր տեղի ունենալիք մրցումներուն յայտագիրը (բոլոր մրցումներն ալ տեղի պիտի ունենան ժամը 21:00ին՝ Պէյրուսի ժամով):

### ԱՆԳԼԻՈՅ ՖՈՒԹՊՈԼԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ ԱՅՍՕՐ՝ ԹՈՒԹԵՆՀԱՄ - ԼԻՎԸՐՔՈՒԼ

Անգլիոյ ֆուտբոլի ֆեդերատիվի կողմից 37րդ եւ նախավերջին հանգրուանի մրցումներուն, 2րդ դիրքը գրաւող Լիվըրփուլ, որ այժմ չորս կէտով ետ կը մնայ պարագլուխի դիրքը գրաւող Արսենալին, այսօր կարելու մրցում մը ունի կատարելիք, երբ այցելէ Թոթենհամի դաշտը (8րդ): Լոնտոնեան կապը կորսնցնելիք ոչինչ ունի, սակայն Լիվըրփուլի համար յաղթանակը շատ կարեւոր է, տիտղոսին տիրանալու իր յոյսերը չկորսնցնելու համար:

Լիվըրփուլի հաւասարութեան կամ պարտութեան օգտուող պիտի ըլլայ Արսենալ, որ Երկուշաբթի օր հիւրը պիտի ըլլայ Պոլթընի (16րդ): Իսկ 3րդ դիրքը գրաւող Մանչեսթըր Յունայթըտ հիւրը պիտի ըլլայ Իփսուիչի (18րդ):

Թոթենհամ եթէ յաղթանակ մը ար-

ժուար մրցում մը ունի կատարելիք, երբ այցելէ 6րդ դիրքը գրաւող Պորտոյի դաշտը:

Յարութ (10րդ) հիւրը պիտի ըլլայ վերջին դիրքը գրաւող Լորիանի, մինչ Փարիզ Սէն ժերմէն (4րդ) պիտի հիւրընկալէ Մետը (16րդ):

Մտորել՝ այսօր տեղի ունենալիք մրցումներուն յայտագիրը (բոլոր մրցումներն ալ տեղի պիտի ունենան ժամը 21:00ին՝ Պէյրուսի ժամով):

### ԱՆԳԼԻՈՅ ՖՈՒԹՊՈԼԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ ԱՅՍՕՐ՝ ԹՈՒԹԵՆՀԱՄ - ԼԻՎԸՐՔՈՒԼ

Անգլիոյ ֆուտբոլի ֆեդերատիվի կողմից 37րդ եւ նախավերջին հանգրուանի մրցումներուն, 2րդ դիրքը գրաւող Լիվըրփուլ, որ այժմ չորս կէտով ետ կը մնայ պարագլուխի դիրքը գրաւող Արսենալին, այսօր կարելու մրցում մը ունի կատարելիք, երբ այցելէ Թոթենհամի դաշտը (8րդ): Լոնտոնեան կապը կորսնցնելիք ոչինչ ունի, սակայն Լիվըրփուլի համար յաղթանակը շատ կարեւոր է, տիտղոսին տիրանալու իր յոյսերը չկորսնցնելու համար:

Լիվըրփուլի հաւասարութեան կամ պարտութեան օգտուող պիտի ըլլայ Արսենալ, որ Երկուշաբթի օր հիւրը պիտի ըլլայ Պոլթընի (16րդ): Իսկ 3րդ դիրքը գրաւող Մանչեսթըր Յունայթըտ հիւրը պիտի ըլլայ Իփսուիչի (18րդ):

Թոթենհամ եթէ յաղթանակ մը ար-

### ՖՈՐՄԱԿԱՆ 1 ՎԱՂԸ՝ ՍՊԱՆԻՈՅ ԿՐԱՆ ՓՐԻՆ

Ֆորմալիս 1ի 2002ի աշխարհի ֆուտբոլի 2002 Տորնեոյի կ'ունենայ վաղը՝ Կիրակի, Սպանիոյ մէջ: 65 լիկոնց այս կրան փրին, որուն երկարութիւնն է 307 քմ., կը սկսի ժամը 15:00ին՝ Պէյրուսի ժամանակացոյցով: Ինչպէս միշտ, օր մը առաջ, այսինքն այսօր տեղի կ'ունենան փոյ-փոյիչընի մրցումները:

Երկուսն ապա փորձերուն, Ֆեռարիի գերմանացի վարորդ Միքայէլ Շումպերը, որ անցեալ տարի շահած էր նոյն այս կրան փրին, փոյ-փոյիչընի առաջին դիրքը գրաւելով, հանդիսացաւ առաջին, արձանագրելով՝ մէկ վայրկեան 20" 380 արդիւնք մը:

Վարորդներու ընդհանուր դասաւորման մէջ, այժմ ան կը գրաւէ առաջին դիրքը՝ 34 կէտով: Ան այս եղանակին երեք անգամ շահեցաւ երեք տիտղոսներ, իսկ մէկ անգամ ալ գրաւեց երրորդ դիրքը: Սնոր ետին, 2րդ դիրքը կը գրաւէ Ռայֆ Շումպերը (Ուիլիամ), որ ունի 20 կէտ: 3րդ դիրքին վրայ է Ուիլիամի վարորդ քրուստիպի Սուան Փայլո Մոնթոյա (17 կէտով):

Իսկ ինքնաշարժերու ընդհանուր դասաւորման մէջ, Ֆեռարի 40 կէտով կը գրաւէ առաջին դիրքը, իսկ Ուիլիամ 37 կէտով՝ 2րդ դիրքը:

### ԼԵՎԱՄԻ ՇԱՐԱԹԱՎԵՐՁԻ ՅԱՅՏԱԳԻՐԸ

Շաբաթավերջին, Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան Բուլճարի դաշտին վրայ տեղի կ'ունենան Հ.Մ.Ը.Մ.ի ԼԵՎԱՄԻ պատրաստութիւնի մրցումները՝ հետեւեալ յայտագիրին հիմամբ.

ԺԱՄ	ԴԱՇՏ
Ժորոսեան - Լ. եւ Ս. Յակոբեան	
(միջակ տղաք) 3:00ին	
Լ. եւ Ս. Յակոբեան - Դպրեվանք	
(մեծ տղաք) 4:00ին	
Ճեմարան - Շամիեան - Թաթիկեան	
(մեծ աղջիկներ) 5:00ին	
Ս. Հոփսիսեան - Շամիեան - Թաթիկեան	
(մեծ տղաք) 6:00ին	

ԺԱՄ	ԴԱՇՏ
Ս. Քառասնից Մանկանց - Ա. եւ Լ. Յակոբեան	
(միջակ տղաք) 12:00ին	
Ս. Խանամիրեան - Յառաք (միջակ տղաք) 1:00ին	
Յառաք - Մեարոպեան (մեծ աղջիկներ) 2:00ին	
Ս. Հոփսիսեան - Ա. Խանամիրեան	
(միջակ աղջիկներ) 3:00ին	
Մեարոպեան - Շամիեան - Թաթիկեան	
(մեծ տղաք) 4:00ին	
Ս. Հոփսիսեան - Ճեմարան (մեծ տղաք) 5:00ին	
Կ. Վ. - Դպրեվանք (մեծ տղաք) 6:00ին	
Լ. եւ Ս. Յակոբեան - Քաղաքի Հայ Աւետ. Բուլճ (մեծ տղաք) 7:00ին	

### ԶԱԼՉԻՕ

#### ՎԱՂԸ՝ ՆԱԽԱՎԵՐՁԻՆ ՀԱՆԳՐՈՒԱՆԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԸ

Իտալիոյ ֆուտբոլի ֆեդերատիվի կողմից 33րդ եւ նախավերջին հանգրուանի մրցումներուն, որոնք տեղի պիտի ունենան վաղը՝ Կիրակի, միեւնոյն ժամուն՝ 16:00ին (Պէյրուսի ժամանակացոյցով), ճակատագրական պիտի ըլլան առաջին երեք դիրքերը գրաւող կապիտաններուն՝ Ինթեր Միլանի, Տուվենթուսի եւ Ա. Էս. Ռոմայի համար, նկատի ունենալով, որ միայն անոնք յոյս ունին տիտղոսին տիրանալու:

Պարագլուխի դիրքը գրաւող Ինթեր Միլան, որ պիտի հիւրընկալէ Փիաչենցան (11րդ), վերջին անգամ ֆուտբոլի մրցումներուն մրցումներուն մրցումներուն սայթաքում մը, պիտի ըլլայ ի վնաս իրեն, որովհետեւ 2րդ դիրքը գրաւող Տուվենթուս, միայն մէկ կէտով ետ կը մնայ անկէ, իսկ Ա. Էս. Ռոմա (3րդ) երկու կէտով:

Տուվէ պիտի հիւրընկալէ Պրեշիան (14րդ), իսկ Ա. Էս. Ռոմա՝ Քիեո Վերոնան (4րդ):

Ստորեւ՝ 33րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը (բոլոր մրցումներն ալ տեղի պիտի ունենան ժամը 16:00ին՝ Պէյրուսի ժամով):

ՎԱՂԸ	ԴԱՇՏ
Արալանթա - Փերուճիա	
Պոլոնիա - Լագիո Ռոմա	
Ֆիորենցիա - Փարմա	
Ինթեր Միլան - Փիաչենցա	
Տուվենթուս - Պրեշիա	
Լեչէ - Ռոմանիէ	
Ա. Էս. Ռոմա - Քիեո Վերոնա	
Քիեո Վերոնա	
Վենետիա - Թորինո	
Վերոնա - Ա. Սէ. Միլան	

### ՀԱՅ ՄԱՆՈՒԿԻ ՄԸ ՄՐՏԵՆ...

Շարունակուած՝ 4րդ ԷջԸԸ

Խնդրեմ, որ ինձի տաս խելք, շնորհ ու ուժ՝ նահատակները չմոռնալու ու թուրքին ըրած չարիքները չնեղելու համար: Աստուած Պապա, բոլ քանի մը ամիս առաջ քու քովդ եկած նանիկիս, թէ ես չեմ մոռցած եւ իրեն կը խոստանամ չմոռնալ իր ըսածները եւ պատմածները, սակայն որովհետեւ ինք Քեզի ամէն տարի կ'աղօթէր, ես այսօր իր տեղը պիտի աղօթեմ, որ ինձի ուժ տաս անոր ըսածները չմոռնալու եւ միշտ հայ մնալու: Աստուած իմ, մի՛ ձգբը, որ աշխարհին վրայ գտնուող հայերը նորէն չարչարուին եւ անոնց ալ խելք, շնորհ ու ուժ տուր հայ մնալու եւ թուրքին ըրածները չմոռնալու:

Չար ձեռքին ծաղիկը երկարելով տղեկը կը շարունակէ:

«Այս մէկը նանիկիս կողմէ է, ան երբ անցեալ տարի ինձի հոս բերաւ, ըսաւ, որ եթէ օր մը ինք չկարենայ գալ, ես իր տեղը ծաղիկ մը բերեմ եւ աղօթք ընեմ, որովհետեւ ան ըսաւ, թէ ինչպէս բոլոր հայ նահատակներուն, նաեւ իր ազգակիցներուն ու հարազատներուն համար շինուած է այս եկեղեցին եւ անոնց համար ծաղիկները կը դնենք ու կ'աղօթենք»:

Կրկին խաչակնքելէ ետք ՀԱՅ տղեկը կը սեղմէ հօրը արեւ եւ անոր դառնալով կ'ըսէ:

«Պապա գիտե՞ս, նանիկը ինձի կ'ըսէր, թէ այս ոսկորները կրնան իր մամային, պապային եւ կամ ազգակիցներուն ոսկորները ըլլալ եւ ան կ'ըսէր, թէ ես եւ բոլոր հայերը պէտք չէ մոռնանք անոնց այցելելու եւ մոմ վառելու...»:

Դուրս կ'ելլէ տղեկը, շատ գոհունակութիւն ու հանգստութիւն պատճառելով ապակիներու ետին դրուած «բոլոր հայ նահատակներուն, նաեւ իր նանիկին ազգակիցներուն ու հարազատներուն համար շինուած այս եկեղեցին»-ին եւ Տէր Զօրի մէջ գտնուած միլիոնաւոր նահատակներու աճիւններուն, որոնք տակաւին չեն հանգստացած:

Թէ եւ հայ մանուկի մը բերնէն արտասանուած լոկ աղօթք մըն էր, որ Աստուծոյ կ'ուղղուի աշխարհի բոլոր տարածքներուն վրայ գտնուող հայ մանուկներէն, Հայաստանի մէջ, ծաղիկները իրենց ձեռքին Մի-ձեռնակարբեր ուղղուած տղեկներէն եւ աղջկաներէն, սակայն այդ աղօթքը ռեւտ մըն է, սրբազան կտակի մը յաւերժացման ապացոյցը, փաստ, որ պիտի գտնուին ժառանգորդներ այդ կտ

